

Տիգրան Սարգսյան.

Մենք պետք է կարողանանք հակակոռուպցիոն ծրագրում ներկայացնել հստակ և չափելի միջոցառումներ: Հակակոռուպցիոն ծրագրի իրականացման առաջին փուլը կատարված է, որը ենթադրում էր համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի ձևավորում, երկրորդ փուլը մեզանից պահանջելու է արդեն այդ օրենքների ենթաօրենսդրական ակտերի կիրառում, ինչը, բնականաբար, ամենակարևոր փուլն է: Երկրորդ սկզբունքը կայանում է նրանում, որ հանրությունը պիտի զգա, որ մեր գործողությունները և հակակոռուպցիոն ծրագիրը տալիս են ռեալ արդյունքներ, և երկրորդ փուլում չափազանց կարևոր է լինելու, որ մենք հաշվետվություն տանք հանրությանը ոչ միայն մեր կողմից ընդունված որոշումների, օրենքների մասին, այլ որպեսզի մենք հանրությանը ներկայացնենք կոնկրետ արդյունքները, որոնք բխում են այդ միջոցառումներից: Երրորդ կարևորագույն սկզբունքը դա լայն ներգրավվածությունն է հասարակությանը հակակոռուպցիոն ծրագրի իրականացման մեջ: Մենք բազմիցս հայտարարել ենք, որ շահագրգռված ենք, որպեսզի այս ծրագրում մասնակից լինեն հասարակական կազմակերպությունները, այդ թվում նաև ընդդիմության ներկայացուցիչները, և հրապարակավ հրավիրել ենք նրանց մասնակցելու այս ծրագրերի իրականացմանը, այդ թվում նաև հակակոռուպցիոն հանձնաժողովին կից գործող մոնիտորինգի հանձնաժողովի գործունեությանը, ինչը հնարավորություն կտա մի կողմից վերահսկել կառավարության գործունեությունը, մյուս կողմից՝ անմիջական մասնակիցը լինել հակակոռուպցիոն ծրագրի իրականացմանը: Հնարավոր չէ պատկերացնել առողջ հասարակություն առանց ուժեղ, առողջ և կոնստրուկտիվ ընդդիմության, և մենք քայլեր ենք ձեռնարկում, որպեսզի ընդդիմության համար ստեղծվեն բարենպաստ պայմաններ, նրանք հնարավորություն ունենան մասնակցելու մեր բոլոր ծրագրերին, այդ թվում նաև, և առաջին հերթին, հակակոռուպցիոն ծրագրի իրականացմանը: Չորրորդ կարևորագույն սկզբունքը դա համապատասխան միջավայրի ձևավորումն է: Հանրապետության նախագահը իր ելույթում Ազգային Ժողովում հայտարարել է, որ մենք պետք է կարողանանք հաղթահարել այն հոգեբանական բարդույթը, որն այսօր առկա է Հայաստանի Հանրապետությունում, և պետք է անհանդուրժողական մթնոլորտ ձևավորենք կոռուպցիայի դեմ, և պետք է սկսենք ինքներս մեզանից: Մենք մեր շարքերում չպետք է հանդուրժենք մարդկանց, ովքեր խուսափում են հարկերի վճարումից, ովքեր հովանավորում են այս կամ այն բիզնես ոլորտը: Հասկանալի է, որ մեր գործողությունները առավել արդյունավետ կլինեն, եթե այդ պայքարը մենք սկսենք ինքներս մեզանից և մեր շարքերից, կարողանանք հաղթահարել այդ լուրջ հոգեբանական բարդույթը: Մյուս կողմից հակակոռուպցիոն գործողությունները ենթադրում են, որ նաև հանրության մեջ, մտածողության մեջ, վարքագծի մեջ յուրաքանչյուր քաղաքացու պետք է տեղի ունենա փոփոխություն, այն է, մենք իսկապես ամեն մեկս մեր տեղում պետք է անհանդուրժողական լինենք ցանկացած կոռուպցիոն դրսևորումների առումով և ինքներս պետք է պայքարենք կոռուպցիայի դեմ: Եվ սրանով է, որ մենք կարող ենք երաշխավորված

լինել, որ կոռուպցիայի դեմ Հայաստանում հնարավոր կլինի իրականացնել արդյունավետ քաղաքականություն:

Որո՞նք են մեր նպատակները. ունենալ այս ոլորտում լուրջ նվաճումներ, լուրջ փոփոխություններ: Անցումային երկրների փորձը ցույց է տալիս, որ դա հնարավոր է: Իհարկե, մենք չենք կարող մեկ ակնթարթում այս բոլոր նպատակները իրագործել, մեկ ակնթարթում փոխել մեր բոլորի մտածողությունը, վարվելակերպը, վարքը, վարքագիծը, դրա համար պետք է ժամանակ, համատեղ ժամանակ և այսպիսի քննարկումները, բաց, թափանցիկ քննարկումները, իհարկե, նպաստելու են այդպիսի միջավայրի ստեղծմանը: Եթե մենք չենք կարող մեկ ակնթարթում հասնել Նոր Ջեյլանդիայի, Սինգապուրի, Նորվեգիայի, Շվեդիայի մակարդակին հակակոռուպցիոն մեր պայքարում, բայց մեզ համար լավ տեսանելի է Բուլղարիայի և Ռումինիայի փորձը, որոնք կարողացել են շատ կարճ ժամանակահատվածում հոգեբանական այդ բարդույթը հաղթահարել, և մենք կարծում ենք, որ երկրորդ փուլը հակակոռուպցիոն ծրագրի իրականացման լինելու է հենց այդպիսի բեկումնային փուլ, որ և՛ հասարակությունը, և՛ միջազգային կազմակերպությունները հնարավորություն են ունենալու գնահատել, որ Հայաստանում կա լուրջ տեղաշարժ: Առանձնահատկությունը կայանալու է նրանում, որ ինքներս հրապարակավ ներկայացնելու ենք ձեզ մոնիտորինգի մեթոդները և ինքներս իրականացնելու ենք հրապարակային մոնիտորինգ, թե ինչպես է իրականացվում հակակոռուպցիոն ծրագրի երկրորդ փուլը, ինչը հնարավորություն է տալու հանրությանը հետևելու, թե արդյոք մեր խոսքերը և գործը համընկնում են, թե ոչ: Ամենախիստ դատավորը լինելու է մեր սովորական քաղաքացին: Մենք լի ենք վճռականությամբ հաղթահարելու այդ չարիքը, և նման ֆորումները և միջազգային կազմակերպությունների աջակցությունը միայն նպաստելու են մեր գործի հաջողությանը:

Շնորհակալություն ուշադրության համար:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, պարոն վարչապետ, այժմ բացման խոսքով հանդես կգա Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար պարոն Ջոզեֆ Փեննինգտոնը.

Joseph Bennington:

The Prime Minister, Mr. Minister, ladies and gentlemen, it is a great pleasure to be here this morning to be joined, also, by the prime minister. I would like to thank him for his publically stated commitment to deal with what is a critical problem for the Republic of Armenia and I appreciate the principles that he has laid out this morning for the government's approach to that problem. The US government is pleased to support this forum, we thank UNDP for the co-sponsorship and we thank other international agencies for their support as well.

The a basis for today's discussion – I would just like to note that the government of the Republic of Armenia has undertaken several key international obligations with regards to combating corruption.

These include the United Nations Convention Against Corruption, the OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia, and the Council of Europe's Group of States Against Corruption, or, GRECO. What we are seeking to do in today's forum is to build on these international obligations which are part of the government's policy and to ensure that those international obligations are incorporated into the thinking behind the development of the government's Anti-Corruption Strategy. This forum is an opportunity for government representatives, representatives of civil society, and the private sector to have discussions to ensure that the strategy that is developed corresponds to, and effectively implements, those international obligations. The government, of course, has the primary responsibility to identify the priorities that will appear in the Anti-Corruption Strategy – I think it is also important to emphasize that the participation of their partners in the private sector and in civil society is absolutely critical to the success of the strategy. I would also like to recognize that many of the organizations represented in this room, civil society organizations, have been working on this issue for years and have already made important contributions and have many more contributions to make. Their input today and in the future is critical to guiding Armenia's efforts to develop the Anti-Corruption Strategy and to ensure that Armenia effectively implements its international obligations in the anti-corruption field.

As I said, the US government, though USAID, is enthusiastically supporting this effort and we will continue to do so as long as the political will is shown by the government. Thank you very much.

Tigran Sargsyan:

I would like to add one more.

Հարգելի գործընկերներ, ուզում եմ մի կարևոր հայտարարություն անել, որը վերաբերում է հենց հոգեբանական բարդույթների հաղթահարմանը: Ուզում եմ, որ բոլոր ներկաները իմանան, որ հակակոռուպցիոն ծրագիրը մեզ համար կարևոր է ոչ թե այն պատճառով, որ մենք ունենք միջազգային պարտավորություններ, այլ որովհետև մենք ունենք խորը գիտակցություն, որ սա լուրջ հասարակական չարիք է, որը վտանգում է մեր ազգի ապագան, և պետք է խնդրեմ, որպեսզի բոլորը այս կարևորագույն թեզը հաշվի առնեն, սա կառավարության սկզբունքային դիրքորոշումն է, իսկ միջազգային կազմակերպությունների առաքելությունը կայանալու է նրանում, որ օժանդակեն, օգնեն մեզ այս չարիքը հնարավորին չափ կարճ ժամկետում վերացնել Հայաստանի Հանրապետությունից, որպեսզի մենք շատ չտրվենք այն թեզին ու մտադրությանը, թե մենք հավաքվել ենք այստեղ, որովհետև ունենք միջազգային պարտավորություններ, ոչ՝ մենք հավաքվել ենք այստեղ, որովհետև ունենք խորը գիտակցություն, որ դա մեր պրոբլեմն է, և մենք ի վիճակի ենք այդ պրոբլեմը լուծել, եթե գիտակցենք դրա վտանգը մեր երկրի, մեր ժողովրդի համար:

Շնորհակալություն:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, պարոն Փեննինգտոն, պարոն վարչապետ, նշենք, որ այստեղ այսօր ներկա են ոչ միայն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլև մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ, որոնք այսպիսով ևս

ընդգրկվում են հակակոռուպցիոն պայքարի մեջ իրենց չափով և հուսով ենք, որ ապագայում նրանք ավելի ակտիվ կմասնակցեն: Այժմ խոսքը տրվում է ՄԱԿ-ի մշտական համակարգող ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Կոնսուելա Վիդալին:

Consuelo Vidal:

Good morning, Mr. Prime Minister, representatives of the Armenian government, colleagues from the international organizations, ladies and gentlemen. The United Nations Development Programme is very pleased to support this event as well we have been part of the national effort to support anti-corruption activities in the country and, as a development programme, we are pleased to support this because corruption poses a major governance and development challenge. The negative impact can be seen in virtually any sector of public life being a main barrier for poverty reduction and a factor that erodes social cohesion and discourages the proper functioning of formal institutional structures. We all know that corruption also impedes economic growth, among others, discouraging foreign and domestic investments and taxing entrepreneurship, creating inefficiency in the market, decreasing tax revenue, destructing the composition of political expenditure, destructing innovation, and increasing the size of the informal sector.

But corruption is principally a governance issue, a failure of institutions and a lack of capacity to manage society by means of controlling work of social, judicial, political checks and balances. When this formal and informal systems break down, it becomes harder to commence and enforce laws and policies that ensure accountability and transparency. The findings of corruption perception survey indicate that almost ninety percent of Armenians do see corruption as a major problem. But, at the same time, the public is not aware, was not aware, about the mechanisms in place to fight it – such as the Anti-Corruption Strategy, the Anti-Corruption Council, as well as Armenia’s international obligations in the fight against corruption.

While the main obligation to fight corruption lies with the government, this is a problem of each and every one of the Armenians and the international community stands ready to support these national efforts. We are very pleased that this forum will address the steps that Armenia is taking nationally and has already undertaken to comply with commitments set by GRECO, by OECD, and the UN Convention to fight corruption. By joining the UN Convention to fight corruption, Armenia undertook responsibilities that are being addressed in the development of the second stage of the national Anti-Corruption Strategy. We view these as a milestone in Armenia meeting some of its international obligations in this field and, though in recent years, Armenia has seriously improved its legal and institutional framework, there is still a need to achieve progress in, in fact, implementing them.

The United Nations welcomes the government’s commitments to fight corruption, once again expressed by the prime minister today and we, once again, would like to say that, while governments carry the main factor, the main burden, of fighting against corruption, it is a problem of each and every Armenian and we must say that after a successful stage of implementation of reforms in Armenia, all of us are accountable for civil society status in Armenia on its path to reform. That requires the active participation of, and commitment of, all of Armenian society as a whole. We welcome this forum as a step in that direction, and we would like to express once again the commitment of the United Nations working in Armenia to continue supporting national efforts. Thank you.

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, տիկին Վիդալ, այժմ խոսքը տրվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար պարոն Սերգեյ Կապինոսին:

Sergey Kapinos

Honorable Prime Minister, Prime Minister, excellencies, ladies and gentlemen. I am really pleased to address you at this forum dedicated to Armenia's international obligations in the fight against corruption. Corruption is a disease that inhibits the economic, social, and political developments of the country in the normal functioning of the public administration and resulting in citizens becoming increasingly disillusioned about the system of governance and the institutions in place. In this context it is crucial to find ways to combat corruption at all levels. Despite some progress in fighting corruption, in the main part in Armenia since 2003, there are studies and surveys that indicate that corruption still remains a predominant problem in the country. We welcome the government's repeatedly expressed commitment to fight corruption and hope that this commitment will result in the development of an efficient, operational, and a results-oriented Anti-Corruption Strategy that will drive the process of fighting corruption in the country.

Through a series of international instruments, quite a number of international conventions and agreements, Armenia has undertaken a serious international commitment to fight corruption. These are all key international documents setting standards and proposing tools for the fight against corruption. The fact that Armenia has ratified these international conventions is undoubtedly an important step; however, legal commitments to fight corruption can only be translated into tangible results if they are coupled with genuine political will at the highest level to follow through with systematic and practical measures ensuring that all the components of the fight against corruption, including corruption prevention, detection, criminalization, sanctions, and public awareness are implemented in a balanced and well coordinated manor.

In addition to political will to fight corruption, a comprehensive Anti-Corruption Strategy and a results-oriented Action Plan are needed as well. In order to develop such a comprehensive document, concerted efforts from the government, the civil society, and the international community will have to be deployed. It will be necessary to critically assess what has been achieved under the first Strategy, what gaps are left, and what issues still remain to be addressed. The lessons learned from the development and implementation of the first Strategy should be the underlying foundation for the deliberation of new anti-corruption policies and actions.

The OSCE stands ready, and not only that, but renders now all the necessary support to the Armenian authorities and the civil society to design and implement a new, effective and all-encompassing Anti-Corruption Strategy.

In conclusion, I hope that today's forum will provide an opportunity for the government agencies and the civil society to provide their contributions to the assessment of the implementation of Armenian international commitments and the possibilities for their further incorporation into anti-corruption

policies. We are looking forward to having a constructive discussion and exchange of ideas on this crucial topic for Armenia's future development. Thank you.

Քրիստինե Բարսեղյան.

Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի ղեկավար պարոն Ֆրանսուա Վեզինային, որը կներկայացնի Տնտեսական Համագործակցության և Զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի հակակոռուպցիոն գործողությունների պլանին, որը հայտնի է OECD, ACN, Istanbul Action Plan և այլ հապավումներով: Պարոն Վեզինան նաև կներկայացնի, թե ինչպես այդ ծրագիրը, այդ ցանցը ինչպես է կապված մեր ազգային ռազմավարությունների, հակակոռուպցիոն ռազմավարությունների և գործողությունների պլանի հետ:

Շնորհակալություն:

Francois Vezina:

Thank you Kristine and good morning everyone. I am pleased to give this presentation on the Istanbul Action Plan and I realize there are people in this room who know what the Istanbul Action Plan is, and I also realize that there are people that don't know, so, for those who know, if you could please bear with me.

Let me start by showing you a slide on different anti-corruption conventions adopted in the past twelve years. The first was the Inter-American Convention against corruption in 1996, twelve years ago, by the Organization of American States. It was the first such regional anti-corruption convention. It was soon followed by a number of conventions: the EU Convention and the landmark OECD Convention against Bribery. Then, in 1999, the Council of Europe Conventions and the establishment of GRECO – which we'll be talking about today – GRECO, to monitor implementation of the Council of Europe's international instruments. There's the Convention for Asia and Pacific, the African Union Convention, and lately, and perhaps most importantly, UNCAC, which entered into force in 2005. While this growing momentum in the fight against corruption worldwide is considered an encouraging sign, one of the authors of UNCAC has likened this large number of agreements to a tsunami, a tsunami which has led to confusion in many countries and many international bodies as well.

This morning, the other speakers and I shall be looking at three of the obligations or agreements, those under GRECO, UNCAC, and the Anti-Corruption Network Istanbul Action Plan. I'll therefore try my best to present as clearly as possible the difference between the Istanbul Action Plan, the OECD, ACN first and second monitoring reports ACN recommendations, country updates, etc. Let me start with OECD. OECD has been addressing corruption first and foremost by developing various instruments targeting active bribery, the supply side of corruption, that is, the offering of bribes. It has adopted four important instruments, these are listed here. The first instrument is the OECD Convention on Combating

Bribery of foreign public officials in international business transactions – it's probably the most famous instrument. The fourth is also quite known, the 1996 recommendation of the Council on tax deductibility of bribes to foreign public officials. Up until then, in many countries, bribes were actually tax deductible. Under these instruments, parties to the convention – all thirty OECD members (member countries) and six non-OECD countries – are required to implement a comprehensive set of legal, regulatory, and policy measures to prevent, detect, prosecute, and sanction bribery of foreign officials. Also, the parties to the convention are required to confiscate bribes and any profits obtained as a result of bribes.

Perhaps the most famous example of the application of this Convention on Combating Bribery is the case of Siemens, a large, German, electrical engineering company, which came under investigation in 2006 in Germany. It was suspected of trying to bribe key Union officials and of establishing a massive slush fund to obtain foreign contracts. In 2007, the company agreed to pay a fine of 201 million euros – close to 3 million dollars – to end an investigation into corruption in its telecommunications division. As to the massive slush fund, there is evidence that it had reached 1.3 billion euros. The consequences for the company are extremely serious. The cost of cleaning up the company is estimated at 1.8 billion euros. Siemens is not an isolated case, there are today a very large number of other firms under investigation in Germany. And Germany may not be the only country sanctioning Siemens – there is still a possibility of a fine of 1 billion US dollars from the US Securities and Exchange Commission. Today Siemens claims to be one of the cleanest companies in the world.

Cooperation with non-OECD economies.

OECD has developed relations with non-OECD economies to promote OECD anti-bribery and integrity instruments in three regions of the world: the Asia-Pacific region in association with the Asian Development Bank; the Middle East where the MENA - the Middle East and North Africa - where the MENA countries have launched a working group on civil service and integrity and a task force on business integrity and bribery; and the third region – our region – is Europe, Eastern Europe, and Eurasia. So, in Central Europe and Eastern Europe, the Caucasus, and Central Asia progress in the fighting corruption is being made in the framework of the Anti-Corruption Network for Transition Economies, or ACN, and support and the European Union and the OECD initiatives support for improvement in government and management, SIGMA.

So, what is the Anti-Corruption Network? The Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia, ACN, was established by national governments, CSOs, international organizations and donor agencies at the regional workshop entitled “Combating Corruption in Transition Economies” convened by OECD and USAID ten years ago, in October 1998, in Istanbul. (I am getting confused with my slides in Armenian – there we go.) So, a toll of 25 countries, not counting OECD countries, make up the ACN and, you'll have guessed that the countries in red are the Istanbul Action Plan countries. The ACN has also served as an umbrella for several sub-regional initiatives within the ACN territory. There's the Baltic Anti-Corruption Initiative in 2001, the stability-packed Anti-Corruption Initiative for the Balkans in the year 2000, which brings us to the Istanbul Action Plan which was launched in 2003.

Five years after the creation of the ACN – in 2003 – a new initiative was proposed to the ACN countries which did not participate in any of the other organized sub-regional program or initiative focusing on countries of the former Soviet Union. Common history and Russian language were among the important factors which allowed this diverse group of countries to be grouped into one regional

initiative known as the Istanbul Anti-Corruption Action Plan. So, the eight Soviet countries accepted the invitation to join – they're listed here – the reason why there's an x next to Kyrgyzstan and Kazakhstan – Kyrgyzstan joined soon after the first six had joined and Kazakhstan joined a year later.

The Istanbul Anti-Corruption Action Plan. Since this forum is about linking international conventions and the new Anti-Corruption Strategy, it's fair to ask the question whether there's an Action Plan document, per se, in the Istanbul Action Plan. Yes, there is; however, it is a relatively short, six-page, framework document included in the handout that you have. The Action Plan is meant to be flexible and implementation is meant to take into account national conditions of the eight countries. I think that what's very important to note is that, unlike GRECO, participation in this initiative is on a voluntary basis.

How does the Istanbul Action Plan work if the Action Plan itself has no pre-identified activities, tasks, or measures to be taken? Peer review and evidence-based, policy dialogue has been at the core of the Istanbul approach. Peer review involves mutual assessment and development of recommendations for individual member countries by other member countries through an open dialogue among governments, as opposed to the assessment of individual countries carried out by foreign and external agencies. The implementation of the Istanbul Action Plan in Armenia during 2003-2007 involved the following steps:

- The first round of monitoring took place from June 2004 to 2006
- A review of Armenia took place in June 2004 in Paris based on a self assessment by Armenia and recommendations were reviewed and endorsed at that meeting
- Two years later there was an on-site visit to Armenia that was organized in September 2006 and Latvia, Kyrgyzstan, Russia, and the USA were part of the peer review team.
- Three months later, the ACN monitoring report for Armenia was adopted in December 2006, and it is the document that contains the 24 recommendations. You have that document in your handout as well.
- Armenia has since presented an update, dated September 2007, for ACN review, and you have this document. The ACN has not reviewed this updated document yet.
- The next round, the second round, of reporting and monitoring consists of a proposed schedule for an on-site visit in the summer of 2009 – so that means in one year from now. Four months before coming here, ACN, will send a detailed questionnaire which is contained in this document which is available – the draft questionnaire is there. Actually, Armenia has provided comments – reviewed and provided comments – on this questionnaire – so anyone can actually look at this questionnaire. Two months prior to the visit, Armenia is to send the filled out questionnaire to the ACN. The proposed schedule for the plenary meeting is three to six months later.

The ACN is to drop the ratings that you might have seen already if you looked at the first round report whereby the country is non-compliant, partially compliant, largely, or fully compliant. One could assume according to the schedule on the screen that Armenia is expected to be fully compliant with the Istanbul Action Plan sometime in 2009 because, unlike UNCAC or GRECO, the Istanbul Action Plan is not designed to last forever. If all countries fully complied with all of the recommendations, the Istanbul Action Plan would cease to exist.

The Armenian Monitoring Report, adopted in December 2006, contained 24 recommendations under these three areas of implementation. Let's have a look at these recommendations and, although 20 minutes may not be necessary to go over the 24 recommendations, it could actually take many days if not a week to do this in a group, we will go over the 24 so that you know what they're about. And yes, the recommendations that appear here are actually a year and a half – if not more – older and much may have changed since. The recommendations are divided into three pillars and the first pillar is on the national anti-corruption policy and institutions. You'll notice, under this pillar, one recommendation is fully complied with, three largely, and three partially.

The first recommendation is about the anti-corruption council and monitoring group and that fact that it is operational or not, and the compliance level is largely but the ACN noted that new tasks might require changing the current mandate of the council and the monitoring commission. The council lacks visibility and does not provide timely information about results achieved. The council and the monitoring commission are operational but they do not hold regular meetings and they do not properly assess results or measures taken and they've noted that no specific measures were reported as to how the high moral and ethical standards of the members of the bodies were insured.

The second recommendation is upgrades to statistical monitoring and reporting of corruption – largely complied with – but the panel noted that the system lacks a comprehensive and accessible statistics about corruption offences and the current system does not provide for detailed information about the types and trends and the level of public officials and public institutions involved.

On the third recommendation – to consolidate the law enforcement efforts in the fight against corruption with the newly established specialized department within the prosecution service – this is partially complied with. It was said that authorities believe – Armenian authorities believe – that one of the problems is the lack of willingness of the public to report corruption to law enforcement institutions. The number of prosecutions was found to be – especially of large scale bribery cases – remains very low. The progress reported in the update refers to the February 2007 adoption of the judicial code, which is supposed to bring more independence and transparency to the judiciary and the adoption of the law on prosecution, with the role of the prosecutors, whereby the prosecution service is no longer responsible for the investigation of crimes, it only supervises.

Fourth recommendation is that they should study examples of countries where specialized independent anti-corruption bodies with the combination of repressive, preventive, and educational tasks and powers is considered largely complied with; however, they noted not specific studies, working groups or other specific measures were undertaken by the authorities to analyze experience in other countries. The progress update notes a number of new measures taken and we could enumerate a few with OSCE support and USAID MAAC project support.

Recommendation five – continue efforts in the area of corruption, specific joint training for police, prosecutors, judges, and other law enforcement officials – is considered partially compliant. No information was provided about any joint corruption-specific training for police, prosecutors, and judges – the panel found.

Recommendation six – conduct awareness raising campaigns and organize training for the relevant public associations, state officials, and the private sector about corruption – again, partially

compliant. It was noted that, with the exception of the school of Public Administration, which developed a training program on prevention of corruption, no other activity aimed at raising awareness on corruption was carried out by the authorities themselves. Progress was reported with reference to 150 million dram in grants awarded to NGOs by the government. TV, radio programs, such as *My Rights, Action Shadow*, with support though UNDP and activities by TI and USAID MAAC activity.

And the final recommendation of this pillar, the only one of the 24 that was fully complied with, was ratification of the Council of Europe Criminal and Civil Law Conventions on corruption and signing and ratifying the UN Convention Against Corruption – the UNCAC was ratified in October 2006. In terms of progress, UNDP Armenia has initiated targeted gap analysis on UNCAC compliance and the recommendations of the gap analysis are to be part of the Strategy and Action Plan.

The second pillar – legislation and criminalization of corruption and the related money laundering offence – in the case here, of the eight recommendations, three are largely complied with, four partially, and one not at all. Amend the incriminations of corruption offences to meet required international standards – partially complied with. It was found that bribery statutes do not specifically cover the offer and the promise of a bribe. It was found that there was not provision in the criminal code criminalizing trading in influence but authorities have indicated a willingness to consider adding such provisions – so, perhaps, such actions have been taken since.

Recommendation nine: review existing levels of statutes of limitations of corruption offences – partially complied with. The statutes of limitations regime has not been substantially changed, according to the ACN panel.

The next recommendation is not complied with, it deals with adopting clear, simple, and transparent rules for the lifting of immunity and review of categories of persons benefitting from immunity. The panel found that the law is not clear what criteria institutions will or should use in exercising authority to lift immunity for specific officials.

Recommendation eleven is to consider introducing, in its legal system, efficient and effective liability of persons for corruption where companies can be made liable, and this was considered partially compliant. It was found that Armenian law does not provide for criminal responsibility for legal persons but a draft law was scheduled for 2007. In terms of progress, it is noted that the working group continues its work. Perhaps someone can clarify during the discussion period whether or not this has been adopted or not.

Recommendation twelve: amend the legislation on confiscation of proceeds from crime to comply with international standards – partially complied with. It was found that the current application is limited to cases where the proceeds of crime have been seized only as evidence for use during proceedings. To date, little actual confiscation has taken place. In terms of progress, Armenia reports an amendment to the criminal code, article 55, approved by the national assembly.

The next recommendation deals with ensuring that the concept of official, as in government official, encompasses all public officials or persons performing official duties – all bodies of all branches of the state – and it was felt that it was largely complied with. Armenia's definition is quite broad; however, it was found unclear whether this current definition would cover legislators in the national and

local assemblies. Fourteen: ensure criminalization of bribery of foreign and international public officials – this refers to the example I gave of the Siemens company. This was found to be largely complied with and no comment was made by the OECD ACN panel. The last recommendation under this pillar: contribute to ensure effective international mutual legal assistance in investigation and prosecution of corruption cases. Although it was found largely compliant, the panel can find no examples – no examples were provided to the assessment team of requests for assistance involving corruption cases.

The third and last pillar – transparency of the civil service – this is the pillar that has the lowest rating overall. Of the nine recommendations, none have been fully complied with, two largely, four partially, and three are non-compliant.

Recommendation 16: introduce a unified system for recruitment in the civil service in order to limit discretionary decisions – largely compliant, but it was found that while some progress was made, the opportunity for discretionary decision-making is still rather broad, in particular, in the final decision. Progress update reported there is a draft law on public service that was finalized in December 2007.

Recommendation seventeen: adopt a unified code of ethics, code of conduct for public officials modeled on international standards – only partially complied with. The panel found that there is no uniform code of conduct for all public officials; they found that there is no single body exercising control over the activities; they found that there is no uniform mechanism for settling conflict of interests. Updates reported by Armenia include the judicial code, now has a description of a code of ethics for judges, the law and prosecution established an ethics commission, and the civil service system pilot ethics commission was established in Ministries of Health, Education and Science, and Social Affairs.

Recommendation eighteen is found non-compliant – this deals with ensuring that there is a constant monitoring of insurance on the rules on gift acceptance and the avoidance of the conflict of interest and sufficient sanctions. Although rules exist, there is no control over compliance, no authorizing body to enforce order and decision, no monitoring of procedures, there is no clear definition of conflict of interest, and no legally prescribed sanctions against perpetrators, there is no system to monitor implementation of conflict of interest regulations. According to ACN OECD, this remains one of the most vulnerable aspects of the anti-corruption system.

Next recommendation: screen the system for control of assets of public officials to detect possible loopholes – partially compliant. It was found that submitting declarations of income of public officials is a mere formality. Declarations are not reviewed, tax service does not carry out verifications and cross checking, and info is not being analyzed. In terms of updates, the Armenians listed to law on declaration on property and income of physical persons and procedures adopted in April 2007 to come into force starting in 2009 and will be applied to the income earned in 2007.

Another recommendation not complied with – enhance the obligation to report suspicions of corruption, adopt measures for the protection of employees against harassment. It was found that there is a lack of a mechanism for the protection of employees in state institutions against disciplinary action and harassment when they report suspicious practices within the institutions to law enforcement officers or prosecutors.

Recommendation twenty-one – largely complied with – in order to ensure the publicity and transparency of public procurement, introduce an electronic contracting and bidding system. Improvements in transparency and access to information – on bidding information – shows important progress, according to ACN. The electric bidding was said, at that time, to be envisaged for 2008 and, in terms of update, a contractor has been selected to introduce e-procurement over the next two to three years.

Recommendation twenty-two – adopt a full set of anti-money-laundering legislation – partially complied with. Some of the elements of the 2004 anti-money-laundering law need to be amended and brought in line with international standards. Exceptions for Armenian diaspora is considered not compatible with international standards and only a few suspicious transaction reports have been disseminated to the prosecutor's office. So far, up until eighteen months ago or so, none of the cases have been fully investigated.

Two more recommendations to go. Recommendation twenty-three – partially complied with – rigorously follow the national Anti-Corruption Strategy in improving the rule, governing, the relationship between public officials and citizens, and the procedures associated with access to information. It was found that public participation in anti-corruption decision making process could be strengthened with the new anti-corruption strategy – which is one of the objectives of this forum. They've noted that some progress has been made, but widespread concern remains among civil society and businesses as to the timely and full access to information.

And the last recommendation – found to be non-compliant – ensure fluent and permanent contacts and coordination among control auditing institutions in order to facilitate the revealing of corruption offences. The ACN panel found that coordination and exchange of information among financial control, external and internal audit institutions, and with law enforcement bodies remains weak. There's not an established mechanism for information exchange, and actions in the event of suspicion and detection of violations, which may indicate corruption related crimes. In terms of update, it was reported that the new chamber of control would be formed as an independent body to monitor the expenditures of state bodies, use of state and community ownership.

Getting back to the Anti-Corruption Strategy. Anti-Corruption Strategies and Action Plans are important statements of political will and political direction. They also serve as a unique device to clearly inform all government officials, the business community, civil society, the media, the public at large, as well as international development communities about the reforms governments propose to implement – when and by whom – over the next five years or so. Having said this, it is important to note that Anti-Corruption Strategies themselves are not the goals. The technical availability of strategies alone is not a significant achievement – it can even be an obstacle if all the attention goes towards their development rather than actual implementation. However, in countries with high levels of widespread corruption it may be helpful to have explicitly formulated anti-corruption policies agreed by all key players which clearly state how the government plans to fight corruption. Action plans with a clear allocation of responsibility can strengthen implementation and discipline. If one was to favor the more explicit approach including the proposed action relative to the twenty-three recommendations in the Istanbul Action Plan that have not yet been fully complied with would merit serious consideration. A note on the

time schedule, if countries were to follow the Istanbul Action Plan's implicit time table it would be expected that all recommendations would be fully complied with at some point in time in 2009.

Implementation as an objective. As I just mentioned, the national Strategy is not the objective itself, the objective should be implementation. In other words, countries need not wait for their Strategy and Action Plan to be fully drafted, reviewed, and adopted in order to follow up on the Istanbul Action Plan recommendations. For instance, it is my understanding that Armenia continues to follow up on its recommendations as it drafts its new Strategy. So, thank you, and I thank Aida for having given me five minutes of her time.

Աիդա Արուստյունովա.

Ես կներկայանամ, Քրիստինեի գործը մի փոքր թեթևացնելով, Աիդա Արուստյունովա, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատու: Շատ հաճելի է ձեզ տեսնել այսօր այստեղ, ծանոթ դեմքեր, և ուզում եմ ողջունել բոլոր մասնակիցներին: Ես մի փոքր կարճ կլինեմ ի տարբերություն Ֆրանսուայի, բայց համենայն դեպս կփորձեմ ձեզ ներկայացնել ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան, և ինչպես է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հայաստանյան ներկայացուցչությունը աջակցում կառավարությանը դրա իրականացման գործընթացում: Նախ մի փոքր անդրադառնամ նրան, թե ինչու ՄԱԿ-ի կոնվենցիա: Ունենք Եվրոխորհրդի կոնվենցիաներ, Լատինական Ամերիկայի կոնվենցիաներ, որոնք վերաբերում են կոռուպցիայի դեմ պայքարին, բայց ուզում եմ նշել, որ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան ես ուղղակի կոնվենցիա կասեմ, ինքը շատ համապարփակ է և ներկայացնում է մանրամասն բոլոր դրույթները, ընդգրկելով կոռուպցիայի կանխարգելումը, ընդգրկելով քրեականացումը և միջազգային համագործակցությունը և ընդգրկում է միջոցների վերադարձը: Դուք երևի Ֆրանսուայի ելույթից տեսաք, որ շատ ընդհանրություններ կան նրանք, ովքեր ծանոթ են կոնվենցիային, բնականաբար, շատ ընդհանրություններ կան դրույթներում, երաշխավորագրերում, և նաև ուզում եմ նշել, որ GRECO – ի երաշխավորագրերի հետ էլ շատ համահունչ են և նմանություններ կան: Մի փոքր անդրադառնամ պատմությանը: Ուրեմն, Գլխավոր Ասամբլեան ՄԱԿ-ի ընդունել է կոնվենցիան 2003 թ-ի հոկտեմբերի 31-ին, և ուժի մեջ է մտել կոնվենցիան 2005 թ-ի դեկտեմբերի 14-ին: Հարց կառաջանա, որն է ընդունելը, որն է ուժի մեջ մտնելը: Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ժամանակ, երբ երեսուներորդ երկիրը անդամակցում է նրան: ՄԱԿ-ի կոնվենցիայի վերահսկողությունը և իրականացումը համակարգվում է ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի կողմից, համառոտ անգլերեն UN ODS, երևի ձեզ ծանոթ կլինի, և մեր գրասենյակը սերտորեն համագործակցում է ինչպես այլ ՄԱԿ-ի գրասենյակների, այնպես էլ UN ODS-ի հետ կոնկրետ կոնվենցիայի իրականացման հարցում: Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է կոնվենցիան 2005 թ-ի մայիսի 19 –ին, և ռատիֆիկացիան ընդունվել է Ազգային ժողովի կողմից ըստ UN ODS-ի մարտի 8-ին 2007թ-ի, չնայած Ֆրանսուան նշեց հոկտեմբեր 2006, այսինքն մտել է Ազգային ժողով հոկտեմբերի վերջին ,բայց ստորագրվել է 2007թ-ի մարտի 8-ին: Անդամ երկրների թիվը 140 է, որից 117 երկրների Ազգային ժողովներն են ընդունել, այսինքն ռատիֆիկացվել է 117 երկրների կողմից: Անդամ երկրների համաժողով է, դուք երևի լսած կլինեք, և դա ամրագրված է

փաստաթղթում, որ կոնվենցիայի իրականացումը պետք է իրագործվի անդամ երկրների կողմից հավաքված համաժողովի միջոցով: Այդ համաժողովի նպատակն է բարելավել անդամ երկրների կարողությունները և միմյանց միջև համագործակցություն խթանել: Առաջին համաժողովը տեղի է ունեցել Հորդանանում 2006 թ-ին, որտեղ անդամ երկրները մշակել են ինքնազննահատման հարցաշար (self assessment checklist), այսինքն այն փաստաթուղթը, որով որ երկրները հաշվետվություն են տալիս, թե ինչպես են իրականացնում կոնվենցիան, որպեսզի UN ODS-ի գրասենյակը, որը համակարգում է այդ գործընթացը, տեսնի, թե ինչքանով է պրոգրեսը դեպի կոնվենցիայի իրականացում տեղի ունենում: Երկրորդ համաժողովի ժամանակ, որը Բալիում էր տեղի ունեցել 2008 թ-ի հունվարին, քննարկվեցին մեխանիզմները, թե ինչպես վերահսկել պրոգրեսը, երկիրը հաշվետվություն տալիս է, բայց ինչքանով է դա համապատասխանում իրականությանը: Այդ մեխանիզմի մշակման գործընթացը այժմ շարունակվում է, և որոշվեց անդամ երկրների կողմից, որ երրորդ համաժողովի ընթացքում, որը կանցկացվի 2009 թ-ին Քաթարում, այդ մեխանիզմը կընդունվի, հուսանք, որ կընդունենք այդ մեխանիզմը: Մի փոքր անդրադարձ, թե ինչքանով են մայրցամաքներով անդամակցում կոնվենցիային, ինչպես տեսնում եք, բոլորից բարձր տոկոսը անդամակցության աֆրիկյան երկրների կողմից է՝ 31 տոկոս, Ասիա՝18, Արևելյան Եվրոպա՝16, Լատինական Ամերիկա՝20 և Արևմտյան Եվրոպա՝ 15: Ինչպես տեսնում եք, Եվրոպայի կոնտինենտը ավելի քիչ է անդամակցում կոնվենցիային: Շատ համառոտ կներկայացնեն նպատակները և կառուցվածքը, ուրեմն, ՄԱԿ-ի կոնվենցիայի նպատակներն են՝ ավելի արդյունավետ պայքար կոռուպցիայի դեմ և համապատասխան կանխարգելիչ միջոցների կիրառում, միջազգային համագործակցություն և տեխնիկական աջակցություն, ներառյալ միջոցների վերադարձ, և պետական գործերի և ունեցվածքի ազնիվ և պատասխանատու կառավարման խրախուսում: Հիմնական գլուխները ՄԱԿ-ի կոնվենցիայի հետևյալն են.

Կանխարգելիչ միջոցներ

Քրեականացում, իրավապահ գործունեություն

Միջազգային համագործակցություն

Միջոցների վերադարձ

Այնուհետև կա գլուխ, որտեղ ինֆորմացիա է տրամադրվում, թե ինչպես խթանել տեխնիկական աջակցությանը և տեղեկատվության փոխանակմանը, իրականացման վերաբերյալ նաև կա առանձին գլուխ: Ուրեմն, նախքան անդրադառնալը մանրամասն յուրաքանչյուր գլխին, ես ուզում եմ ասել, որ Հայաստանը այս տարի՝ 2008 թ-ին Բալիի կոնֆերանսի համաժողովի ժամանակ առաջին անգամ հաշվետվությունը ներկայացրեց, և Արտգործնախարարությունն էր համակարգում այդ գործընթացը, սակայն վերջերս, երևի տեղյակ եք, Թբիլիսիում տեղի ունեցած ACN-ի ժամանակ յոթերորդ, կազմակերպված OECD – ի կողմից, նշվեց, որ ոչ միայն Հայաստանը, այլ դա վերաբերում է բոլոր երկրներին, կարիք կա որակապես բարելավելու այդ հաշվետվությունները, որովհետև իրենք շատ քիչ ինֆորմացիա են պարունակում, և նաև նշվեց կարիքը, որպեսզի աջակցեն երկրներին

բովանդակապես ավելի բարելավված ներկայացնել այդ հաշվետվությունը, ինքնագնահատման հարցաշարի մասին է խոսքը գնում: Շատ համառոտ ես ուղղակի ուղղությունները ձեզ կներկայացնեմ յուրաքանչյուր գլխի, քանի որ իրենք բավականին մանրամասն ներկայացնում են ոչ միայն պահանջները, այլև մեխանիզմները, որոնք որ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն, որպեսզի իրականացնեն: Ուրեմն, կանխարգելիչ միջոցների գլխում, որը հինգերորդից տասնչորսերորդ հոդվածներով է սահմանափակված, հետևյալ ուղղություններն են.

- անհրաժեշտություն ունենալու արդյունավետ և համակարգված հակակոռուպցիոն քաղաքականություն և համապատասխան մարմիններ
- պաշտոնատար անձանց վարքագծի կանոնադրքեր
- հանրային գնումների և պետական ֆինանսների համապատասխան կառավարման մեխանիզմներ
- հրապարակային հաշվետվություն
- յուրաքանչյուր անդամ երկիր պետք է նպաստի դատական և դատախազական մարմինների աշխատողների ազնվության ավելացմանը
- յուրաքանչյուր անդամ երկիր պետք է ձեռնարկի միջոցներ, անհրաժեշտ քայլեր, փողերի լվացումների կանխարգելման ուղղությամբ
- մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման ստանդարտների և աուդիտի հզորացում
- քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին

Այսինքն տեսնում եք, բավականին լայն սպեկտր է՝ սկսելով հակակոռուպցիոն մարմիններից և քաղաքականությունից, մասնավոր հատվածը ընդգրկելով և քաղաքացիական հասարակությունը ընդգրկելով այս գլխի այս բաժնի մեջ:

Քրեականացում, իրավապահ գործունեություն, տասնհինգերորդից քառասուներորդ հոդվածներ: Այստեղ հիմնականում կաշառքի վերցնելու, առաջարկելու, ստանալու վերաբերյալ պատժամիջոցներ, որոնք որ պարտադրվում են երկրները ձեռնարկել, դա վերաբերում է ոչ միայն տեղացի, այլև օտարերկրյա պաշտոնատար անձանց և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, ովքեր աշխատում են, գործում են տվյալ երկրում: Պաշտոնատար անձի կողմից գույքի հափշտակմանը, ապօրինի յուրացմանը, ազդեցությանը և դիրքի չարաշահմանը: Նաև յուրաքանչյուր անդամ պետություն պետք է միջոցառումներ ձեռնարկի կանխարգելելու ապօրինի հարստացումը, կաշառակերությունը մասնավոր հատվածում, հանցավոր ճանապարհոց ստացված եկամուտների լվացումը և պարտակումը, ձեռնարկել միջոցներ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների սառեցման, առգրավման և բռնագրավման ուղղությամբ: Կոռուպցիայի դեմ իրավապահ մարմինների միջոցով պայքարում մասնագիտացված մարմնի կամ մարմինների առկայություն, համագործակցություն ներպետական մարմինների միջև, ինչպես նաև ներպետական մարմինների համագործակցություն մասնավոր հատվածի հետ:

Միջազգային համագործակցություն գլուխը ընդգրկում է քառասուներեքից հիսուներորդ հոդվածները: Այստեղ հիմնականում խոսվում է երկրների միջև համաձայնագրերի ստորագրման վերաբերյալ, երկկողմ, բազմակողմ, և այդ գործում պետությունների, անդամ երկրների օժանդակությունը: Դա վերաբերում է քննության վարույթի ընթացքում, ինչպես նաև հանձնման հարցում դիմելու կամ հանձնման հնարավորություն, դատապարտված անձանց փոխանցման նպատակով երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքում, համատեղ հետաքննություններ և իրավապահ մարմինների միջև համագործակցություն:

Եվ վերջին գլուխը, որը վերաբերում է միջոցների վերադարձին, նշեմ, որ կոնվենցիան միջոցների վերադարձը համարում է հիմնարար սկզբունք, և նշվում է, որ միջազգային համագործակցության միջոցով հանցագործություններից ստացված եկամուտների փոխանցումների կանխարգելումը և բացահայտումը, գույքի անմիջական վերադարձը և գույքի առգրավման մեխանիզմներ: Այստեղ ուզում եմ նշել, որ բավականին կարևոր է անգլերենում կոչվում է dual criminality, երկու երկրում նմանատիպ պատիժ սահմանող օրենսդրություն, դրա առկայության կարևորությունը, որովհետև մի երկրում կարող է դատապարտվի այս հանցանքը, իսկ մյուսում ոչ, լինեն տարբեր միջոցներ, և նաև ուզում եմ նշել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի և պայմանագրերի վերաբերյալ, կարևորությունը այդ փաստաթղթերի ստորագրման և համագործակցության: Ֆրանսուան մի փոքր անդրադարձավ նրան, որ ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակը 2007թ-ին նախաձեռնել է UN ODS-ի հետ համատեղ կոնվենցիայի վերլուծությունը և Հայաստանի օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքի համապատասխանությունը կոնվենցիային և 2007թ-ին իրականացվել է Կանխարգելման միջոցներ գլխի վերլուծությունը, որը կատարել է պարոն Արմեն Խուդավերդյանը, որը այստեղ է, և այս տարի մենք 2008 թ-ին շարունակում ենք նախաձեռնությունը և մեր տեղացի փորձագետները իրականացնում են կոնվենցիայի քրեականացում, միջոցների վերադարձ և միջազգային համագործակցության գլուխների վերլուծություն: Եվ ուզում եմ նշել, որ մենք ամփոփ հաշվետվությամբ հանդես կգանք ուշ աշնանը, և հույս ունենք, որ այն ասառաջարկությունները, որ տրամադրել ենք և տրամադրելու ենք հակակոռուպցիոն մոնիտորինգի հանձնաժողովին և ռազմավարության երկրորդ փուլի մշակող խմբին, կընդգրկվեն ռազմավարության մեջ և գործողությունների պլանում: Կանխարգելման միջոցների վերաբերյալ ունենք երեսուներկու առաջարկություն, չեմ ուզում բոլորը մանրամասն ձեզ ասել, սակայն դրանք վերաբերում են հակակոռուպցիոն մարմինների ուժեղացմանը, կարողությունների զարգացմանը, մասնավոր ստորաբաժանումների, մասնագիտական ստորաբաժանումների ստեղծմանը մոնիտորինգի հանձնաժողովի ներքո, նաև վերաբերում է նրան, թե Հայաստանին բնորոշ կոռուպցիայի մակարդակի չափման համար անհրաժեշտ ցուցանիշների մշակման անհրաժեշտություն կա Transparency International-ի հետ համատեղ, Համաշխարհային Բանկի և այլն, մեծ ուշադրություն է նաև դարձվում քաղաքացիական հասարակության մասնակցությանը որոշումների ընդունման գործընթացին, առաջարկվում է մշակել մեխանիզմներ վերահսկելու պետական ծառայողների գույքը, ավարտել հաշվապահական նոր ստանդարտներին անցնելու գործընթացը, փողերի լվացման կանխարգելման վերաբերյալ օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային օրենսդրական նորմերին: Ես ասում եմ

առաջարկություններից մի քանիսը, ամբողջը չեն ներկայացնում, և հույս ունեն, որ մենք կունենանք հնարավորություն հրապարակայնորեն ամբողջ աշխատանքը ներկայացնել աշնանը, և ուրախ կլինենք ձեր մասնակցությունը տեսնելու այնտեղ:Եվ վերջինը, ինչ կցանկանայի ձեզ ներկայացնել ,դա ինչպես է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան արտացոլված հակակոռուպցիոն ռազմավարության երկրորդ փուլի նախագծում, և ուզում են նշել, որ հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը ընդգծում է կոնվենցիայի դրույթների իրականացման կարևորությունը, որպես Հայաստանից ստանձնած միջազգային պարտավորություններից մեկը, և կարող են ասել ոչ միայն այս կոնվենցիայի, այլև GRECO-ի և OECD-ի առաջարկություններին պարոն Խուդավերդյանը կանդարդաբան դրան մի փոքր ուշ, ներառում է այն պահանջները, որոնք որ ամրագրված են կոնվենցիայում, մասնավորապես կոնվենցիայի Կանխարգելման միջոցները և Քրեականացումը գլուխների դրույթները, ընդգծում է քաղաքացիական հասարակության մասնակցության կարևորությունը կոռուպցիայի դեմ պայքարում, ընդունում է պետական կառույցների և դրանց անձնակազմի կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, և ներառում է այն առաջարկները, որոնք արդեն իսկ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը ներկայացրել է կոնվենցիայի Կանխարգելիչ միջոցների գլխի վերաբերյալ: Մենք հույս ունենք, որ վերջնական փաստաթղթում այդ առաջարկությունները կմնան և հույս ունենք, որ կմասնակցենք նաև այն ինդիկատորների, այն չափորոշիչների մշակմանը, որոնք որ ցույց կտան, թե ինչպիսի առաջընթաց է եղել և ինչ ազդեցություն է ունեցել այդ առաջարկությունների իրականացումը:

Շնորհակալություն, կներեք, եթե չարաշահեցի ձեր համբերությունը, և ուրախ կլինեմ պատասխանելու հարցերին:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, մենք արդեն մեկ ժամ է ուշանում ենք օրակարգից, ունենք քննարկում և ընդմիջում, կա առաջարկություն պարոն Օսիկյանի կողմից այժմ լսել իր ներկայացումը, այնուհետև քննարկել և ընդմիջել, որովհետև ես հույս ունեմ, հարցերը ձեր մոտ արդեն կուտակվել են: Խնդրեմ, պարոն Օսիկյան: Ես ասեմ, որ շատ կարևոր է լսել այս ներկայացումը, քանի որ վերջերս մենք տեղեկացվեցինք, որ Հայաստանը իրականացրել է մոտ հիսուն տոկոսը GRECO-ի պարտավորությունների, և այդ իմաստով մենք պիտի որ շատ հետաքրքրված լինենք լսելու:

Պարոն Օսիկյան.

Շնորհակալություն, մինչև ներկայացնելը հարցի, կամ ավելի ճիշտ սա երևի թե հաշվետվության պետք է նման լինի, կցանկանայի նշել, որ, իհարկե, շատ կարևոր է ստանալ առաջարկություններ, հետո դրանք կատարել, բայց չեն կարծում, որ միայն այդ առաջարկությունների կատարումով կոռուպցիոն երևույթները վերանում են, և դրանից հետո կարելի է ասել, որ ամեն ինչ լավ է երկրում, բայց կարծում են դա շատ կարևոր քայլ է, մասնավորապես GRECO-ի մասով ես կարող եմ նշել, այն ամբողջությամբ գործիքները GRECO-ով, առաջարկություններով նախատեսված ուղղված են հենց կոռուպցիոն ռիսկերի

նվազեցմանը, այսինքն այն օրենսդրական բարեփոխումները, որոնք մենք իրականացնում ենք կամ որոնց ուղղված են մեր ջանքերը, փաստորեն դրանք ինչ-որ չափով փորձ է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, այն ռիսկերը, որոնք առկա են մեր օրենսդրության մեջ: Իհարկե դրանից հետո պետք է լինեն այլ գործուն քայլեր, համապարփակ ծրագրեր, մասնավորապես հակակոռուպցիոն ռազմավարության նոր ծրագիրն է կամ երկրորդ փուլն է փորձում կառավարությունը ընդունել և կյանքի կոչել, այսինքն դրանք պետք է համապարփակ մի ընդհանրության մեջ դիտարկել, և մեկ առանձին գործիքը վերցրած կամ միջազգային պարտավորության կատարումը վերցրած, չի կարելի ասել դրանից հետո ամեն ինչ լավ է լինելու: Բոլոր դեպքերում ես ներկայացնեմ, որ կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը՝ GRECO-ն, Եվրոպայի Խորհրդի կառույց է կամ մարմին է համարվում, որին Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է 2004թ-ի հունվարից, ընդ որում GRECO-ի անդամ պետությունների թիվը գնալով ավելանում , և ոչ միայն անդամ պետություններից են հանդիսանում, Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններն են, օրինակ, անդամ է նաև համարվում GRECO-ի ԱՄՆ-ն, որը վերջերս նաև մեր զեկույցի հետ մեկտեղ համապատասխան լիազույժար նիստի ընթացքում քննարկվում էր նաև նրանց կատարողականի լրացուցիչ որոշումն էր ընդունվում, և այնպես է, որ գրեթե բոլոր պետությունները, որոնք անցնում են համապատասխան գնահատման փուլեր, գրեթե մոտ վաթսուհից յոթանասուն տոկոս համընկնում են նրանց առաջարկությունները, խոսքը օրենսդրության մեջ առկա բացերի և կոռուպցիոն ռիսկերի մասին է: Եվ այսպես, 2005 թ-ին անդամակցությունից հետո տեղի է ունեցել այց Հայաստանի Հանրապետություն GRECO-ի փորձագետների կողմից, հանդիպումներ են եղել պետական այն գերատեսչությունների հետ, որոնք ըստ GRECO-ի փորձագետների կարող են համապատասխան տեղեկություններ տրամադրել, դրանից հետո եղել է գնահատման զեկույցի նախագծի նախապատրաստումը և 2006 թ-ի մարտի լիազույժար նիստին ընդունվել է գնահատման զեկույցը: Գնահատման զեկույցով Հայաստանի Հանրապետությանը տրվել էին քսանչորս առաջարկություններ: Հիմնականում GRECO-ի առաջարկությունները հիմնվում են և կառուցվում են գոյություն ունեցող երկու կոնվենցիաների սկզբունքների վրա, ինչպես գիտեք, դա կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան է և կոռուպցիայի մասին քաղաքական իրավունքի կոնվենցիան է, ինչպես նաև կա ընդունված քսան հիմնարար սկզբունքները նախարարների կոմիտեի կողմից, որը նույնպես հանդիսանում է հիմնարար փաստաթղթերից մեկը կամ կողմնորոշիչներից մեկը, որի հիման վրա պետություններին տրվում են առաջարկություններ: Ստացած քսանչորս առաջարկությունները առնչվում էին թե փաստորեն կոռուպցիոն իրավախախտումներին, թե իրավաբանական անձանց պատասխանատվությունը կոռուպցիոն իրավախախտումների համար, համապատասխան կոռուպցիոն իրավախախտումների արդյունքով անպատասխան գույքի բռնագրավմանը, անձեռնամխելիության, ինունհիտետի հետ կապված խնդիրներ, որը նույնպես կարևորվում է GRECO-ի կողմից, հանրային ծառայությունը առանձին վերցված որպես օրենսդրությունը հանրային ծառայության, և մի շարք ինստիտուտներ, որոնք նախատեսված են հանրային ծառայությամբ, դա ռոտացիան է, նվերների հետ կապված ինստիտուտները, էթիկայի կանոններն են, էթիկայի հանձնաժողովներն են, որոնք կարևորվում են GRECO-ի կողմից: Եվ այսպես, քսանչորս առաջարկությունների կատարմանն ուղղված կառավարությունում ձևավորվեց համապատասխան ծրագիր, տրվեցին համապատասխան առաջարկություններ

կոնկրետ նախարարություններով, գերատեսչություններով, որոնք պետք է ընդունեին կամ առաջարկեին կոնկրետ միջոցառումներ: Համաձայն GRECO-ի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության վերաբերյալ գնահատման զեկույցին, ընդ որում զեկույցի գնահատման առաջին և երկրորդ փուլերը միասին էր վերցված, GRECO-ն ինքը բաժանել էր փուլերի՝ առաջին, երկրորդ և երրորդ, քանի որ առաջին գնահատման փուլը ավարտվել էր 2003 թ-ի սեպտեմբերին, Հայաստանը անդամակցել էր ավելի ուշ, դրա համար մեր զեկույցը այսպես եղավ միացյալ զեկույց, և այժմ առաջիկայում մենք հաջող ավարտելու դեպքում առաջին և երկրորդ փուլերը, կանցնենք երրորդ փուլին, որը վերաբերում է կուսակցությունների ֆինանսավորմանը, ընտրական համակարգերին, այսինքն մեկ այլ ոլորտ, որը, ինքնին ենթադրվում է, որ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում: Քսանչորս առաջարկությունների կատարման համար Հայաստանի Հանրապետությանը տրվել էր ժամկետ մինչև 2007թ-ի սեպտեմբերի 30-ը, և մենք սահմանված ժամկետում պետք է ներկայացնեինք իրավիճակային զեկույց կատարողականի վերաբերյալ: Մեր կողմից ներկայացվել էր կատարողական զեկույցը, ըստ GRECO-ի փորձագետների և կառավարության նախնական գնահատականների ընդհանուր առմամբ կատարված էր համարվել քառասունհինգ տոկոսը, ամբողջ փաստորեն առաջարկությունների քառասունհինգ տոկոսը համարվել էր կատարված, այսինքն տասը կատարված, տասը՝ մասնակի կատարված և չորսը՝ չկատարված: Դրանից հետո մենք իհարկե պլենար նիստին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվեց խումբ, որը մեկնեց Ստրասբուրգ, որը պետք է մասնակցեր և ներկայացներ առարկությունները պետության անունից, անհամաձայնությունները կամ առաջարկություններ այդ զեկույցի վերաբերյալ: Ես նշեմ, որ այդ նախնական, մենք խնդրեցինք, այնտեղ տեղի ունեցավ նախնական նիստ, որի արդյունքում ես կներկայացնեմ այն երեք առաջարկությունները, մեր բարձրացրած հարցերը, որոնք փաստորեն ընդունվեցին լիազումար նիստի ժամանակ: Դրանցից առաջինը երրորդ առաջարկությունն էր, խոսքը վերաբերում է գործադիր իշխանության հետ հարաբերություններում դատավորների լիակատար անկախությունը ապահովելու համար առաջարկվում էր վերանայել դատական համակարգի կազմակերպման վերաբերյալ օրենսդրությունը: Այս առաջարկությունը ըստ նախնական գնահատականի համարվում էր մասնակի կատարված: Իհարկե մենք փորձեցինք հիմնավորել, որ համենայն դեպս փորձագետների երկիր կատարած այցից հետո շատ բան է փոխվել Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես սահմանադրական բարեփոխումների արդյունքում Արդարադատության խորհուրդը, որն ամբողջությամբ միտված է դատական իշխանության ձևավորմանը, մասնավորապես դատավորների թեկնածուների առաջարկման հետ կապված, համապատասխան ցուցակների հետ կապված, և մենք գտնում ենք նաև անձեռնմխելիության հետ կապված առաջարկությունների եզրակացությունների ներկայացումն էր փաստորեն ապահովում հանրապետության նախագահին, մենք գտել և ներկայացրել ենք, որ ըստ էության այլևս հանրապետության նախագահի լիազորությունները դատական իշխանության կազմավորման իմաստով շատ պասիվ է լիազորությունը և պայմանավորված է միմիայն Արդարադատության խորհրդի առաջարկությամբ, այսինքն եթե նախկին մեր սահմանադրությամբ նախատեսված էր, որ Արդարադատության խորհրդի նախագահը հանրապետության նախագահին է, իսկ փոխնախագահները ի պաշտոնե զլխավոր դատախազն ու արդարադատության նախարարը, իսկ առաջարկության բնույթը

կայանում է նրանում, որ պետք է գործադիրի ազդեցությունը հնարավորինս նվազեցնել, մենք ներկայացրեցինք, որ փաստորեն սահմանադրական բարեփոխումների արդյունքում այլևս ոչ՝ հանրապետության նախագահը, ոչ՝ գլխավոր դատախազը և ոչ՝ էլ արդարադատության նախարարը այլևս Արդարադատության խորհրդի անդամ չեն: Իհարկե նրանք ընդունեցին, և քանի որ առաջարկությունը ուղղված էր դատական իշխանության ձևավորման օրենսդրության կատարելագործմանը, բացառելով հնարավորինս գործադիրի ազդեցությունը, մենք առաջարկեցինք, և, փաստորեն, փորձագետների կողմից ընդունվեց: Ավելին ասեմ, որ ընդունվել է դատական օրենսգիրքը, որը նույնպես նոր անկախության լիարժեք մեխանիզմներ է նախատեսում դատավորների համար, և այս պայմաններում ուղղակի համարվեց, որ առաջարկությունը կամ առաջարկությանն ուղղված կատարողականը համարվում է բավարար և ամբողջությամբ կատարված: Հաջորդը դա ութերորդ առաջարկությունն էր, որը նույնպես ընտրված էր մասնակի կատարված, խոսքը հետաքննչական գործառույթների օպերատիվ հետախուզական միջոցառումների մասին էր, դրանք առաջարկել էին, որ ընդունենք համապատասխան օրենսդրություն կոռուպցիոն իրավախախտումների արագ բացահայտմանը, և մենք նշեցինք, որ չի կարելի ասել մասնակի կատարված, քանզի ընդունվել է օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքը, որն ամբողջությամբ նախատեսել է թե՛ համապատասխան միջոցառումները, և թե՛ կարգը, թե ինչպես կարելի է իրականացնել այս կամ այն օպերատիվ հետախուզական միջոցառումը, և դրանով հանդերձ կարելի էր ակնկալել, որ առաջարկությունը և դրա կատարմանն ուղղված մեր քայլերը կարելի է գնահատել ամբողջությամբ կատարված և ըստ էության այդպես էլ եղավ, լիազուժար միստի ընթացքում եզրակացությունը փոխվեց: Եվ հաջորդը, որը չկատարված էր դիտարկվել փորձագետների կողմից, խոսքը հետևյալին է վերաբերում, GRECO-ն առաջարկել էր առաջնահերթ համարել հանրային ծառայության համար նախապատրաստվող էթիկայի կանոնների նախապատրաստումը, և ապահովել, որ պետական բոլոր պաշտոնյաներն այդ ուղղությամբ անցնեն համապատասխան վերապատրաստում, և այդ կանոնները հասանելի լինեն հանրությանը: GRECO-ն գտել է, որ ընդհանրապես այս ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ բան չկա, մենք հիմնավորեցինք կամ առաջարկեցինք, որ վերանայեն առաջարկությունը, եզրակացությունը, քանի որ մենք ունենք թե՛, եթե խոսքը օրենսդրությանն է վերաբերում կամ էթիկայի կանոններին, մենք ունենք թե՛ քաղծառայողների համար ընդունված էթիկայի կանոններ, թե՛ հարկային ծառայողների համար, ունենք նաև համայնքային ծառայության շրջանակներում ծառայողների համար էթիկայի նոր կանոններ, մշակվել և արդեն իսկ գործում են դատախազների էթիկայի կանոնները, դատավորների էթիկայի կանոնները, և այս ամբողջ տեղեկատվության տրամադրման արդյունքում փաստորեն GRECO-ն նույնպես վերանայեց մեր կատարողականի վերաբերյալ նրանց եզրակացությունը: Ըստ էության մնացած բոլոր առարկությունները կամ մեկնաբանությունները չընդունվեցին, և ըստ էության գտան, որ կան դեռևս շատ անելիքներ Հայաստանի Հանրապետությունում, մենք ինքներս էլ ընդունում ենք այդ ամենը, և վերջնական լիազուժար միստի արդյունքներով փաստորեն ամբողջությամբ կատարված համարվեց տասներկու առաջարկություն, մասնակի կատարված՝ ինը, և չկատարված՝ երեքը: Ես հիմա, եթե թույլ տաք, ներկայացնեմ նաև շատ կարճ երեք այն առաջարկությունները, որոնք այսօր համարվում են ընդհանրապես չկատարված կամ դրանց ուղղությամբ ընդհանրապես քայլեր չձեռնարկված միջոցառումներ: Դրանցից առաջինը

տասներորդ առաջարկությունն է, խոսքը վերաբերում է հետևյալ առաջարկությանը՝ նվազեցնել քրեական հետապնդումից անձեռնաձխելի անձանց կատեգորիաները, և վերացնել հատկապես պատգամավորության թեկնածուների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի, մարզային և տեղական ընտրական հանձնաժողովների անդամների անձեռնաձխելիությունը, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների թեկնածուների անձեռնաձխելիությունը: Սա ամբողջությամբ բխում է իմ կողմից սկզբում թվարկված թե կոնվենցիաներից, թե քսան հիմնարար սկզբունքներից: Ես պետք է նշեմ, որ վերադառնալուց հետո հանրապետության վարչապետի մոտ տեղի է ունեցել խորհրդի նիստ կոռուպցիայի դեմ պայքարի, և ես ներկայացրել եմ, թե այն չկատարվածները, որոնք ըստ էության գնահատվել են GRECO-ի կողմից, կա արդեն իսկ համապատասխան համաձայնություն քաղաքական, որ առաջիկայում իսկապես պետք է համապատասխան օրենսդրական փաթեթ նախապատրաստվի, և պետք է իսկապես վերացնել թե պատգամավորության թեկնածուների և թե համայնքի ղեկավարի, ավագանու անդամի և թե ընտրական հանձնաժողովների անդամների անձեռնաձխելիությունը: GRECO-ն այստեղ տեսնում էր իրոք կոռուպցիոն ռիսկեր, նաև անհավասարություն, և որևէ ձևով քրեական պատասխանատվությունից խուսափելու և պաշտպանվելու միջոց, և դրանով պայմանավորված մենք առաջիկայում իսկապես այս հարցը օրենսդրական նախաձեռնության ճանապարհով կառավարությունը փորձելու է այստեղ փաստորեն ուղղում մտցնել: Հաջորդ չկատարվածը, որը գնահատվել է GRECO-ի կողմից, հետևյալ առաջարկությունն է վերաբերում՝ սահմանել բոլոր կարգի պետական պաշտոնյաների համար կանոններ, որոնք անհրաժեշտ է կիրառել այնպիսի դեպքերում, երբ անձնական ֆինանսական շահերն ու գործունեությունը կարող են առաջ բերել շահերի բախում կամ կողմնապահություն կապված պետական պաշտոնյաների պարտականությունների և պատասխանատվության հետ, նաև առաջարկվել էր քննարկել ռոտացիայի սկզբունքի կիրառումը, ավելի լայն կիրառումը հանրային ծառայության այն ոլորտներում, որտեղ կան կոռուպցիոն ռիսկեր: Մենք այստեղ փորձեցինք ներկայացնել, որ դեռևս կան որոշ ոլորտներ, ծառայություններ, որտեղ կիրառվում է ռոտացիան, թերևս դիվանագիտական ծառայությունն է և հարկային ծառայությունն է, իսկապես դիվանագիտական ծառայությունը նաև ոլորտ է, որտեղ թերևս կոռուպցիոն ռիսկը կարելի է բացառել, հաշվի առնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների բացակայության փաստը, հարկային ծառայությունը իսկապես կարելի է ասել, որ կա, պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, հաշվի առնելով, որ բնակչությանը մատուցում է ծառայություններ, և ծառայություն մատուցողը և նա, ով ընդունում է ծառայություններ, շատ սերտ են համագործակցում կամ ավելի մոտ են, և դրան ուղղված միշտ շատ քայլեր են կատարվում, մասնավորապես հաշվետվությունների ներկայացումը միմիայն էլեկտրոնային եղանակով կամ փոստով ըստ նրանց ցանկության, այսինքն մենք անպատասխան ռոտացիայի սկզբունքը ըստ էության նախատեսել էինք միայն հարկային ծառայությունում, սակայն հաշվի առնելով, որ համապատասխան ռոտացիայի սկզբունքի կիրառումը նախատեսված էր մինչև GRECO-ի գնահատման զեկույցի ընդունումը, այսինքն շատ ավելի վաղ, 2003 թ-ին, GRECO-ն գտավ, որ այս ուղղությամբ գործում որևէ քայլ արված չէ: Եվ այդ կապակցությամբ առաջարկվեց, որ քննարկեն նաև այլ ծառայություններում, պետական հանրային ծառայության այլ ոլորտներում նույնպես այնտեղ, որտեղ անհրաժեշտությունը կա, կիրառել ռոտացիա, խոսքը վերաբերում է նրան, որ մի

պաշտոնյան չպետք է երկար ժամանակ աշխատի միևնույն պաշտոնում, եթե հնարավոր է, պետք է նրան առաջարկվի այլ համարժեք պաշտոն, որպեսզի կոնտակտը ծառայություն ընդունողի և նրա միջև չդառնա մշտական գործող կամ կոռուպցիայի վերածվող երևույթ, սրան է ուղղված ամբողջությամբ ռոտացիայի առաջարկը, և սրանով պայմանավորված GRECO-ն գտավ, որ այստեղ մենք իսկապես գործուն քայլեր չենք արել, և առաջարկեց, որ հնարավորինս շուտ ժամկետում ընդունվի նաև այս ուղղությամբ օրենսդրական ակտեր: Հաջորդ առաջարկությունը, որն արվել էր Հայաստանի Հանրապետությանը, դա հետևյալն էր՝ սահմանել պատասխանատվություն իրավաբանական անձանց համար կաշառակերության և փողերի լվացման իրավախախտումների համար և սահմանել այնպիսի պատիժներ, որոնք արդյունավետ, համարժեք և համահունչ լինեն կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիային: Ըստ էության Հայաստանի Հանրապետությունում ներ իրավական համակարգը լինելով մայրցամաքային, ընդհանրապես չէր անդրադարձել քրեական օրենսդրությամբ իրավաբանական անձանց պատասխանատվությանը, քանի որ իրավաբանական անձինք որպես քրեական իրավունքի սուբյեկտներ հանդես չէին գալիս: Եվ սա նորույթ էր մեզ համար, բայց բոլոր դեպքերում հաշվի առնելով, որ կան բազմաթիվ այլ երկրներ Եվրոպայի Խորհրդի անդամ, որոնք նույնպես մայրցամաքային իրավական համակարգի կողմնակիցներ են եղել և ավանդաբար կրողներ են եղել և այս պայմաններում նրանք նույնպես անցում էին կատարել, GRECO-ի առաջարկությունը ընդունել էին, մենք նույնպես փորձեցինք գնալ այդ ճանապարհով, բայց ըստ էության միայն նախագծման փուլում էր, այսինքն մենք ունենք միայն նախագիծ, Արդարադատության նախարարությունում նախապատրաստվում է, և հաշվի առնելով, որ դեռևս նախագիծը և ընդունված որևէ բան չկա այստեղ, օրենք, նրանք գտան, որ նույնպես կարելի է համարել չկատարված առաջարկությունը, խոսքը վերաբերում է նրան, որ երբ որ իրավաբանական անձինք կաշառակերության հետ կապված որևէ խնդիրներ են ունենում, նրանց նկատմամբ պետք է քրեական օրենսգրքով նախատեսվի պատիժներ: Ինչքան էլ առաջին հայացքից փորձում ենք հասկանալ, թե ինչպես կարելի է իրավաբանական անձանց նկատմամբ կիրառել ազատազրկում, կալանք կամ ցմահ ազատազրկում, բայց պետք է իմանանք, որ կան այլ ավտերնատիվ պատժատեսակներ, մասնավորապես տուգանքի ձևով, լուծարման ձևով, նման գործունեությամբ ապագայում որոշակի ժամկետում չզբաղվելու արգելք, այսինքն չպետք է այստեղ հասկանալ այնպիսի պատիժներ, որոնք կարելի է կիրառել միմիայն ֆիզիկական անձանց կամ հանցագործության սուբյեկտների նկատմամբ: Այնպես որ այստեղ նույնպես մենք անելիքներ ունենք, և առաջիկայում իսկապես հանրապետության վարչապետի կողմից հանձնարարվել է, հարցը քննարկվելու է նաև հանրապետության նախագահի մոտ և համապատասխան հանձնարարականներ են տրվելու: Ընդհանրապես ընդունված է GRECO-ի նիստերում համաձայն GRECO-ի ընթացակարգի, որ ցանկացած զեկույցից հետո, լինի դա գնահատման թե առաջխաղացման, կամ համապատասխանության զեկույց տվյալ դեպքում, քարտուղարությունը հարց է ուղղում, նախագահը հարց է ուղղում տվյալ երկրին, արդյոք համաձայն է երկիրը, որպեսզի զեկույցը տվյալ երկրի վերաբերյալ հրապարակվի: Հիմնականում ձեզ ասեմ, օրինակ հենց Հայաստանի Հանրապետության հետ մեկտեղ գնահատման փուլեր է անցնում, համապատասխանության փուլեր է անցնում Սերբիան, դրանից առաջ Թուրքիան և Մոնտենեգրոն, բոլոր պետությունները տվել էին, որ մենք հետագայում ձեզ կհայտնենք համաձայնության մասին, և չէին հրապարակել: Ի

զարմանս բոլորի, հաշվի առնելով նաև մինչև մեկնելը մենք ունեինք համաձայնությունը մեր ղեկավարության, իշխանությունների, ինչպես ընդունված է ասել GRECO-ի շրջանակներում, մենք տվեցինք մեր համաձայնությունը, որ մենք տեսնում ենք, որ խնդիր չունենք փակ պահելու գեկույցը, համապատասխանության գեկույցը, մեր բացերը այսպես պայմանական ասենք, և համաձայն ենք, որպեսզի այս պահից համարվի հրապարակային փաստաթուղթ, բաց փաստաթուղթ քննարկման համար, և համաձայնություն ենք տալիս, որպեսզի դա նույնպես հրապարակվի, այնպես որ ցանկացողները կարող են GRECO-ի ինտերնետային կայք այցելել և ամբողջ գեկույցը տեսնել, թե գնահատման գեկույցը, և թե համապատասխանության գեկույցը, այն գնահատականները, որոնք տրվում են Եվրոպայի Խորհրդի փորձագետների կողմից մեր կողմից իրականացված քայլերի ուղղությամբ: Նշեմ նաև, որ առաջիկայում մենք պետք է ներկայացնենք նաև առաջխաղացման գեկույցը, առաջընթացի գեկույցը այն չկատարվածների կամ մասնակի կատարվածների վերաբերյալ, փաստորեն դրանք թվով տասներկուսն են, հիսուն տոկոս ամբողջությամբ դա տասներկու առաջարկություններն են, որը կարելի է վերցնել, եթե գնահատելու լինենք այլ պետությունների հետ, մասնավորապես իմ կողմից արդեն իսկ նշած պետություններին, մենք ունենք իրենցից բավականին ավելի քայլ առաջ արդյունքներ, և իսկապես դա խոսում է այն մասին, որ բավականին աշխատանք արդեն կատարված է, բայց չպետք է մոռանանք, որ աշխատանքը կարելի է կատարել, օրենքները՝ ընդունել, բայց խնդիրը վերջնական լուծում չստանա, բոլորս հասկանում ենք, դրա համար պետք է ամբողջը, ինչպես նշեցի, կոմպլեքսի մեջ դիտարկել, և պարոն Խուդավերդյանը քիչ հետո կներկայացնի ծրագիրը, կոնկրետ ուղղությունները, և GRECO-ն, նրա կատարողականը զուտ մեկ քայլ է կամ մեկ ուղղություն է, որը միտված է կոռուպցիայի հաղթահարմանը: Ընդհանուր առմամբ նշեմ, որ չկատարված առաջարկությունները ուղղված էին նաև, պայմանավորված էին ոչ միայն անձեռնմխելիությունից զրկելու, այլ նաև մասնակի կատարվածները պայմանավորված էին հանրային ծառայության օրենսդրության բացակայությամբ, որտեղ պետք է նախատեսվեն նվերների ինստիտուտի կարգավորման հետ կապված հարցեր, էթիկայի կանոնների հետ կապված հարցեր, և համապատասխան բարեփոխումների արդյունքում կարծում եմ մենք կարող ենք ակնկալել, ընդ որում պետք է ներկայացնենք մինչև 2009 թ-ի դեկտեմբերի 30-ը, մինչև այդ կունենանք ավելի լավ իրավիճակ թե վիճակագրական առումով, ընդ որում, և թե օրենսդրական: Այսքանը, եթե կան հարցեր, կարող եմ պատասխանել:

Շնորհակալություն, ես առաջարկում եմ քսան րոպե տրամադրել հարց ու պատասխանին, և հետո ընդմիջում անենք: Խնդրեմ, հարցեր: Եվ մեկ էլ նշեմ, որ առաջին ներկայացման համար հարցերին կպատասխանի պարոն Ֆրանսուա Վեզինան, ինչպես նաև կխնդրենք պարոն Խուդավերդյանին և Տիգրան Բարսեղյանին ևս հարցերին պատասխանել, որովհետև նրանք են ներկայացնում Հայաստանը այդ կառույցում: Շնորհակալություն:

Իրինա Վանյան, ?????????? հիմնադրամ, իմ հարցը պարոն Օսիկյանին է: Պարոն Օսիկյան, եթե դուք նշում եք, որ Հայաստանի Հանրապետությունը համեմատաբար մնացած երկրների հետ ունի առաջընթաց, այսինքն կան ինչ-որ նվաճումներ այս ոլորտում, ես կուզենայի հարցս այսպես ձևակերպել. առաջընթաց փաստաթղթերի, առաջարկների ռազմավարության իրականացման առումով, թե առաջընթաց գործընթացի, իրական

գործընթացի առումով, քանի որ ես կարծում եմ, եթե կան անձնավորություններ բարձր պաշտոնյա, որոնք երկար տարիների ընթացքում և հիմա էլ շարունակում են տալ առաջարկներ լավ ռազմավարություն մշակելու հակակոռուպցիոն, սակայն շարունակում են մնալ կոռուպցիոն դաշտում, չեն կարծում, որ դա առաջընթաց է: Շնորհակալություն:

Պարոն Օսիկյան.

Շնորհակալություն, GRECO-ն իհարկե համապատասխան հարցերին գնահատականներ տալուց դիտարկում է զուտ կոնվենցիան, կոնվենցիայի դրույթներին համապատասխան արված առաջարկությունները և կատարողականը: Այլ հարցեր չի դիտարկում, իհարկե, և փաստացի կատարվածն է գնահատում, ընդ որում գնահատողները բավականին պրոֆեսիոնալ փորձագետներ են, կարծում եմ նրանց տված գնահատականները համապատասխանում են կատարողականին և կատարվածի մասով, և չկատարվածի:

Լևոն Բարսեղյան, “Ժուռնալիստների ասպարեզ” ակումբի խորհրդի նախագահ, Գյումրի. ես , ծանոթանալով օրակարգին, մոտ հարյուր քսան հարց էի նախատեսել, բայց, չչարաշահելով ձեր համբերությունը, տամ դրանցից ընդամենը մեկը, և կխնդրեի նաև, որ պարոն Օսիկյանից բացի նաև պարոն Խուդավերդյանը պատասխաներ.

- GRECO-ի անդամ երկրներից մեկում հարկային պետական ծառայության պետը մի անգամ, թերթին հարցազրույց տալով, ասել է, որ այդ երկրի հեռուստաընկերություններից մեկում տևական ստուգումների արդյունքում հայտնաբերվել են հարկային օրենսդրության բազմաթիվ չարաշահումներ: Այդ հեռուստաընկերությունում ստուգումները սկսվել են այդ հայտարարությունից յոթ օր հետո: Ես խնդրում եմ, պարոնայք, պատասխանեք, սա կոռուպցիա է թե կոռուպցիա չէ, սա պաշտոնական դիրքի չարաշահում է թե ոչ, սա հարկային մարմինների ուղղորդում է, թե ոչ: Շնորհակալություն:

Ես պատասխանեմ, քանի որ ըստ էության այսօրվա ընդհանրապես համապատասխան ֆորումը նվիրված չէր այդ հարցադրմանը, բայց ես կպատասխանեմ: Գոյություն ունի անմեղության կանխավարկած, և կոռուպցիա է թե ոչ արարքը, ցանկացած դեպքում տրվում է իրավական գնահատական, տրվում է համապատասխան դատական ակտ, և դրա արդյունքում միայն կարելի է ասել այս կամ այն երևույթը կոռուպցիոն է, թե ոչ: Ինչ վերաբերում է Ձեր հարցադրմանը, ես այդքան էլ ծանոթ չեմ, բայց բոլոր դեպքերում կարող եմ հավաստիացնել, որ եթե դուք ունեք որևէ խնդիր ցանկացած հայտարարության հետ, կարող եք Դուք ուղղել հարց կամ կարող եք ներկայացնել Ձեր իրավունքները, եթե Ձեր իրավունքներն են խախտվել, դատարան և փորձել դատական կարգով պաշտպանել, և կարծում եմ համապատասխան ներկայացման հետ որևէ կապ չունեն Ձեր հարցադրումը:

Շնորհակալության, ես ներկայանամ, Լարիսա Ալավերդյան, Ազգային ժողովի պատգամավոր, ժառանգությունների վարչություն: Ես ունեմ երկու հարց, մեկը` Հայաստանի Հանրապետության միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունները ունե՞ն որևէ մի

նմանակում, որը կկոչվեր ազգային պարտականություններ, այսինքն ունի՞ Հայաստանի իշխանությունը քաղաքականության ազգային այս մակարդակի վրա, և եթե ունի, ապա ինչպես են դրանք առընչվում իրաի հետ, թե դա նույնն է, և երկրորդ հարցս՝ մենք ժամանակին ստացել ենք ազգային հասարակական կազմակերպությունների, մասնավորապես Armenia Transparency-ի գեկույցը, որն ուղղակի օբստրուկցիայի ենթարկվեց Հայաստանի իշխանության կողմից, այնինչ դա փորձ էր հենց մոտեցնել այդ միջազգային և շատ անգամ վիրտուալ այս պարտավորությունները ազգային պարտավորություններին և ամենօրյա մեր կյանքին, ինչպե՞ս եք դուք գնահատում ձեր այս հանձնաժողովի, մեր հանձնաժողովի աշխատանքը ազգային կառույցների հետ: Ինչպես ասեց Բարսեղյանը, ես էլ ունեի ոչ այդքան մեծ թվով հարցեր, բայց այսքանը:

Պարոն Օսիկյան.

Շնորհակալություն, նախ նշեմ, որ թերևս ազգային պարտավորությունները, այսինքն երբ որ պետությունը, իշխանությունը հանձն է առնում սեփական ժողովրդի առջև կամ պետության առջև որոշակի պարտավորությունների կատարմանը, դա հենց հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրն է, որը նաև ծրագրային դրույթներ է իր մեջ պարունակում և պարտավորություններ, և արդեն իսկ նախապատրաստվում է, տեխնիկական առաջարկությունը արդեն իսկ հավանության է արժանացել, նախապատրաստվում է արդեն համապատասխան եթե չեն սխալվում երկու կամ երեք գլուխ, պարոն Խուդավերդյանը կնշի, արդեն իսկ նախագծված են, և այնտեղ կան կոնկրետ պարտավորություններ, կոնկրետ ուղղություններ: Ինչ վերաբերում է Transparency International-ի կողմից կատարված ուսումնասիրություններին, պետք է նշեմ, որ GRECO-ի առաջարկություններից մեկը վերաբերում է նրան, որ պետությունը պետք է քաջալերի մի շարք կազմակերպությունների, այդ թվում նաև նշված կազմակերպությանը, որպեսզի նրանք կատարեն ուսումնասիրություններ: Ես կարծում եմ, որ այն խումբը, որը ներկայումս աշխատում է համապատասխան հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի այսպես կատարողականի կամ նախապատրաստման վրա, նրանք պետք է անպայման ոչ միայն Transparency International-ի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները հիմք ընդունեն, այլև այլ կազմակերպությունների կողմից, որոնք թվով եթե չեն սխալվում յոթն են, որոնք կատարել են մի շարք ուսումնասիրություններ հանրության շրջանակներում, նաև ունեն յուրաքանչյուրը իրենց կատարված մեթոդոլոգիան, կատարված հարցումները և ուսումնասիրությունները, պետք է նաև անպայման հաշվի առնել մեր նոր ծրագրի ռազմավարությունը որպես ուղղություն, այսինքն եթե նշվում է այս կամ այն կազմակերպության կողմից, որ կոռուպցիոն ռիսկերը այս ոլորտում շատ է կամ այս ոլորտում քիչ է, դրսևորումները այսպիսին են կամ այնպիսին, ապա պետք է անպայման քննարկվի նաև համապատասխան խմբի կողմից, փորձագետների կողմից, որը, կարծում եմ, պարոն Խուդավերդյանն է հենց գլխավորում, և նրանք նաև ներկայացնեն կոռուպցիայի դեմ պայքարը խորհրդի նիստին: Այսինքն բոլոր ուսումնասիրությունները շատ կարևոր են և այնպես չի, որ հաշվի չեն առնվում: Դրանք հաշվի են առնվում, քննարկվում են, կարծում եմ, և անպայմանորեն կներառվեն, եթե իսկապես դրանք օբյեկտիվ են, և չեն կասկածում, որ

օրյեկտիվ են, և դրանք մաս կկազմեն ուսումնասիրության և հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի:

Francois Vezina:

Can I add to your question about the difference between international commitments and national commitments? Armenia has signed international commitments that were drafted by other bodies and often the priorities of these international organizations are not necessarily the same as the government of Armenia would have towards its people. Take, for instance, the OECD convention. OECD is an organization of the developed countries and their aim is to level the playing field in terms of doing business internationally and they would like to see all the countries in the world adopt rules against bribing foreign officials – public, foreign officials. So the objective of OECD is – the initiative comes from developed countries that want a level playing field. In the case of UNCAC, for instance, it was more the case of developing countries, the poorer countries that wanted to opportunity to repatriate the assets that were stolen thanks to bribery – one of the reasons. So, sometimes, the ideas, the purposes, and the origin are not something that Armenia is necessarily focusing on internally but it is brought to their attention by these international agencies. So, I think these international organizations sometimes have different purposes depending on the organization. Thank you.

Աիդա Էսկոյան, “Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն” ՀԿ և Երևանի պետական համալսարան. իմ հարցը պարոն Օսիկյանին է, առաջինը շնորհակալություն շատ հետաքրքիր զեկույցի համար, հարցը կայանում է հետևյալում. դուք նշեցիք, որ ռոտացիան ըստ առաջարկությունների, որը մենք չենք կատարել, պետք է առաջին հերթին իրականացվի այնտեղ, որտեղ կան կոռուպցիոն ռիսկեր: Նշվում է արդյոք այդ ծրագրում կոռուպցիոն ռիսկերի ոլորտները, օրինակ, մտնում է այդ համակարգի մեջ ասենք, դատական համակարգը, որն այլ ուղիներով է ձևավորվում, կամ կառավարման մարմինների, ասենք, նախարարների նշանակումը և այլն, և երկրորդ հարցը, կապված քրեական պատասխանատվության հետ, Ձեզ հետ լրիվ համամիտ եմ, որ քրեական պատասխանատվությունը դա կարելի է այստեղ սահմանել, բայց գուցե այստեղ պրոցեդուրան պետք է ունենա, առաջին հերթին քննարկենք քրեական պատասխանատվության հարցը ղեկավարի, որի մեղքով առաջացել է այդ, հետո նոր, քանի որ գտնում եք, որ կարող է, ասենք, քրեական պատասխանատվության մեծ տուգանքներ ազդեն սոցիալական վիճակի վրա ձեռնարկության աշխատողի, և կարելի է դիտարկել որպես քրեական պատասխանատվության ձևերից մեկը ձեռնարկության փակումը: Շնորհակալություն:

Պարոն Օսիկյան.

Շնորհակալություն, վերջին հարցին ես պատասխանեմ, իսկապես նախատեսվում են նմանատիպ պատիժներ նույնպես, ընդհանրապես համապատասխան ընկերության, կազմակերպության փակում կամ լուծարում ամբողջությամբ, ինչ վերաբերում է նրան, թե կազդի համապատասխան ընկերության գործունեությունը կամ կիրառվելիք պատիժը աշխատողների նկատմամբ, հնարավոր է, որ ազդի, թերևս դրանով պայմանավորված ամեն

կոնկրետ դեպքում դատարանը ինքը պետք է որոշում կայացնելուց խելամիտ որոշում կայացնի, թե ինչպիսի պատիժներ կիրառի, որպեսզի ավելի քիչ սոցիալական կամ բացասական հետևանքներ ունենա աշխատողների նկատմամբ, բայց բոլոր դեպքերում կարծում են այդ աշխատողները իրենց իրավունքները մասնավորապես ռեգրեսիվ կարգով հետագայում նրանցից որևէ ձևով պահանջելու, կամ ընկերությունը տնօրենից, եթե նրա մեղքով է, կամ աշխատողները ընկերությունից, եթե նաև նրանք են արդյունքում տուժում, այսինքն մեխանիզմները կնախատեսվեն իրավական, ու այն երկրները, որոնք ես նշեցի, իսկապես այնտեղ կարգերը առանձին նախատեսված են, կարգավորված է խնդիրը, և մենք ուղղակի պետք է փորձենք ուսումնասիրել, ինչը այսօրվա դրությամբ կատարում է Արդարադատության նախարարությունը, այսինքն միջազգային փորձի ուսումնասիրություն և նոր նախագծի ներկայացում: Ինչ վերաբերում է Ձեր առաջին հարցին ռոտացիայի հետ կապված, կոնկրետ ոլորտներ նշված չեն, նրանք նշում են, որ ընդհանրապես այն ոլորտները, որտեղ որ կոռուպցիոն ռիսկեր են պարունակվում, այնտեղ պետք է նախատեսվեն, և նման ոլորտները կարելի է համարել այն ոլորտները, որտեղ պետական մարմինը կամ ծառայությունը պետական մատուցում է ծառայություն և ծառայությունների մատուցման բնույթով ավելի մոտ է հանրությանը: Այստեղ թերևս ինքը դատական իշխանությունը մի գուցե հանրային ծառայող եզրույթի մեջ չի ներառվում, բայց բոլոր դեպքերում կարելի է ապագայում քննարկել, եթե դատական օրենսգրքի մեջ փոփոխություն կառաջանա, կարելի է առաջարկել և քննարկել: Բայց խոսքը ավելի շատ վերաբերում է հանրային ծառայությանը կամ ադմինիստրացիային: Շնորհակալություն:

Էդուարդ Հովհաննիսյան, “Աքիլես” կազմակերպություն.

Բոլոր ելույթ ունեցողները ասում են, որ քսանչորս պարտականություններից GRECO-ի չորսը չի կատարվել, մենք չլսեցինք ոչ մեկից պատասխան, հարցի պատասխան, իսկ ինչու՞ չի կատարվել, ի՞նչն էր պատճառը, որ չի կատարվել, գուցե որ չի կատարվել, Հայաստանի Հանրապետությունը ունի Transparency International-ի տվյալներով երեք կետի հետընթաց, գուցե այդ պատճառով է, հետաքրքիր է: Շնորհակալություն:

Պարոն Օսիկյան.

Շնորհակալություն, ես նշեցի, որոնք են դրանք, մեկը անձեռնամխելիության հետ կապված խնդիրն է, ես նշեցի, որ չի կատարվել, այսօր Դուք ասում եք որոնք են, չորսը չեն նախ, երեքն են, և դրանցից մեկը, ես նժեցի, իմունիտետի հետ կապված խնդիրն է: Դա, իսկապես, եթե չեն սխալվում, քննարկվել է Ազգային ժողովում, վերջնական լուծում չի ստացել, հարցը բաց է, և կա այսօր վերջնական որոշում քաղաքական իշխանության կողմից հարցին անդրադարձնալ, այսինքն հարցը կլուծվի: Երկրորդը, որը ես նշեցի, իրավաբանական անձանց պատասխանատվության խնդիրն է, և երրորդը, որ Դուք ուղղակի նշեցիք, չկատարվածները, դա հենց ռոտացիայի կիրառումն է այն բնագավառներում, որտեղ փաստորեն կոռուպցիոն ռիսկեր կան, և համապատասխան կանոնների սահմանումը բոլոր այն պետական պաշտոնյաների համար, որոնք կարող են հանդես գալ ֆինանսական կամ անձնական շահերի բախման ժամանակ: Այս երեքն են, ինչու չի կատարվել, չի կատարվել գնահատականը կտան իհարկե խորհրդի նիստում, որովհետև կատարման

պատասխանատվությունը դրված էր կոնկրետ պետական նախարարությունների կամ պետական գերատեսչությունների վրա: Այսինքն գնահատականը կտրվի, և մի գուցե կան նաև օբյեկտիվ պատճառներ, մասնավորապես իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հետ կապված: Սա ես նշեցի սկզբում, որ սա նոր ինստիտուտ է, ընդհանրապես մեր իրավական համակարգին խորթ ինստիտուտ է, և անգամ իրավաբանական գիտությունների դոկտորը, որ խոսեց, նրա համար էր խորթ այս ինստիտուտը, թե ինչպես կարելի է քրեական պատասխանատվության ենթարկել իրավաբանական անձին, կազմակերպությանը: Դրա համար կատարվում են ուսումնասիրություններ, թերևս դրանով է պայմանավորված, որ Արդարադատության նախարարությունը փոքր-ինչ ուշացել է, բայց չի կարելի շտապել և արդյունքը ունենալ վատ, այսինքն կարելի է թեկուզ փոքր-ինչ, ոչ շատ, իհարկե, ուշ իրականացնել, բայց որակով և արդյունավետ, որպեսզի նա նույնպես իր նպատակին ծառայի: Կարելի է շատ արագ ինչ-որ կանոններ ընդունել, ուղղակի ցույց տակու համար, որ մենք սա էլ ենք կատարել, և դրա արդյունքում իրական կյանքում որևէ արդյունք չունենալ, այսինքն մեր հանրությունը այսպիսին է, համ ասում են տեսեք, չի կատարվել, կատարվելու դեպքում էլ ասում են՝ դե կատարվում է, ընդունվում է, բան չի փոխվում, այսինքն կարելի է թերևս քիչ ուշ, բայց ավելի ուսումնասիրված, ավելի խորաթափանց ուսումնասիրման արդյունքում ընդունել, կարծում են, այս երեք նշվածն էլ առաջիկայում կընդունվի կամ կիրականացվի այս ուղղությամբ որոշակի կոնկրետ քայլեր:

Francois Vezina:

Can I just add a little to your question? There are countries in the Istanbul Action Plan countries where the NGOs have taken it upon themselves to monitor the compliance by governments of international commitments and this is something that, I don't know that in Armenia it has been done but this is something done in other countries and it's in the interest of everyone to monitor – to know where they're at – civil society, business, media, and government as well. So, to answer your question, everyone should make it their business to know how their country is complying with international conventions and that's being done in, at least, some other countries – in Istanbul Action Plan countries.

Սակունց Արթուր, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ:

Հարցս վերաբերում է առաջին հերոին ռազմավարական պլանի իրականացման ստուգման ուղղությամբ մոնիտորինգի արդյունքների ազդեցությանը ընդհանրապես և ռազմավարական պլանի ճշգրտման և ընդհանրապես գնահատելու, ինչքանով է պլանը կատարվում, որովհետև այն ցուցանիշները, որ մեզ ներկայացրեցին, որ ասենք այսքանն է կատարվել, այսքանը մասնակի, այսքանը հիմնական և այլն, այնպիսի տպավորություն կարող է ստեղծվել զուտ մեխանիկական, որ բավական լավ վիճակում է, բայց իրական կյանքում ամենևին այդպես չէ, և դա չպետք է մեղադրել մարդկանց, որ նման անվստահություն ունեն թե դատական իշխանության, թե գործադիր իշխանության և ամեն ինչի նկատմամբ, բայց այստեղ հարց հնչեց, որ քաղաքացիական հասարակության կառույցները, հասարակական կազմակերպությունները պետք է գործառույթներ անեն: Մենք արել ենք այդ գործառույթները, մասնավորապես քաղաքական կոռուպցիայի առումով,

հատկապես ընտրությունների հետ կապված, երբ որ մենք ներկայացնում ենք մեր դիտորդական առաքելության եզրակացությունները խախտումների վերաբերյալ, միաժամանակ գործադիր իշխանության, հանձնիս իրավական մարմինների կողմից անգործության դրսևորումը, խախտումների դեմ պայքարի կամ առնվազն դրանց կանխարգելման ուղղությամբ, հարցս հետևյալն է, ինչքանով է ապահովվում կամ ի՞նչ մեխանիզմ կա, որպեսզի այդ մեր մոնիտորինգի տվյալները, դիտորդականի տվյալները, որոնք մենք հրապարակում ենք, հաշվի առնվեն մոնիտորինգային այդ ինստիտուտի կողմից, և ընդհանրապես ճշգրտումների կողմից, ասենք, որպեսզի ռազմավարական պլանի իրականացումը ընթացիկ առումով ճշտվի, սա առաջին հարցը: Եվ երկրորդը, ընդհանրապես կոռուպցիայի համար առաջին խնդիրը քաղաքական կամքն է: Մենք ունենք բազմաթիվ տվյալներ, նաև վերջին այս դատական պրոցեսները, քաղաքական հայացքների հետևանքով կալանված, ձերբակալված անձանց նկատմամբ դատական պրոցեսները, որոնցում ընդհանրապես չի պահպանվում արդար դատաքննության իրավունքը, այսինքն այստեղ դատական իշխանության շրջանակներում կոռուպցիան, ելնելով այդ փորձից, տվյալները նույնպես կան, դուք ի՞նչ եք մտածում անել այդ ուղղությամբ, որպեսզի իրապես ապահովվի դատական իշխանության անկախությունը, որպես երաշխիք կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ, ինչքանով եք դուք ի նկատի ունենալու այդ հակակոռուպցիոն ռազմավարական պլանի մշակման և ընդհանրապես ճշգրտման ուղղությամբ: Շնորհակալություն:

Պարոն Օսիկյան.

Շնորհակալություն, բայց երևի թե հարցը նորից սխալ եք տալիս, պարոն Սակունց, ես իմ կարծիքը կամ դիրքորոշումը կներկայացնեմ, զուտ GRECO-ի շրջանակներում, ընդհանրապես տրվում են առաջարկություններ, և այնուհետև կարող է գնահատվել կատարողականը: Այսինքն դրա հետագա քայլերի կամ կատարողականի նկատմամբ այլ գնահատական հետագայում իհարկե չի լինելու, կոնկրետ առաջարկությունն է լինում և կոնկրետ կատարողականը: Հետագա քայլերի հետ կապված գնահատականների չեն տրվում, բայց եթե դուք ուշադիր եղաք, վարչապետի ելույթի ժամանակ, բացման խոսքի ժամանակ նշեց, որ անկախ միջազգային այս կամ այն կազմակերպության տրված առաջարկություններից, պետությունը, իշխանությունն ինքն է փորձում քայլեր անել, գիտակցում է երևույթը և գիտակցում է դրա վտանգավոր հետևանքները: Կոնկրետ դատական իշխանությունը անկախ է համաձայն Սահմանադրության: GRECO-ն առաջարկել է, որպեսզի համապատասխան օրենսդրական, դատական իշխանության ձևավորմանն ուղղված օրենսդրական նորմերը լինեն ավելի անկախությանն ուղղված, նաև արվել է Սահմանադրությամբ, ես նշեցի, Արդարադատության խորհուրդ, և այլն, և այլն: Եվ ինչ վերաբերում է ընդհանուր կատարողականին կամ հակակոռուպցիոն ընդհանուր GRECO-ի մասով, մեր ծրագիրը, որը մշակվում է հակակոռուպցիոն ռազմավարության, այնտեղ նաև գնահատական է տրվում, այն նախկին առաջարկությունները, որ ընտրվել և կատարվել են, ինչքանով են կյանքում իրականացվել, այսինքն ռեալ գնահատականը նաև տրվելու է մեր հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրում, ինչը, քանի որ պարոն Խոդավերդյանը ելույթ ունի, ես կթողնեմ, որ նա ներկայացնի: Ի՞նչ գնահատական է տրվում, լավ, ունեցել ենք

ծրագիր, հիմա ունենք կատարողական հիսուն տոկոս կամ ընդհանուր հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում ունենք ութսուն տոկոս կամ հարյուր տոկոս կատարողական, ի՞նչն է փոխվել և ի՞նչը լավ չի արվել: Ինչ որ բան չի փոխվել, դրա համար փորձագետները, քանի որ իրենք են գնահատական տալու, ասում են, փորձագետներ, եկեք մշակեք և նաև ասեք, թե ինչո՞ւ չի կատարվել լավ, եթե կատարվել է, ինչո՞ւ կյանքում չի երևում դա, ըստ էության շոշափելի չեն արդյունքները, այդ մասով ես ուղղակի կխնդրեմ պարոն Խուդավերդյանը, քանի որ ըստ էության հարցին պատասխանելու առումով ես պետք է բավարարվեմ միայն GRECO-ի շրջանակներում:

Francois Vezina:

Mr. Khudaverdyan, do you want to answer? Afterwards? But, maybe I could just say, right now, is that there are going to be meetings between the monitoring commission expert group and NGOs to explain – there’s an opportunity for you to propose your involvement in the process. These events will be organized and you will have an opportunity to speak to them.

Քրիստինե Բարսեղյան.

Եթե այս մասով մենք ունենք հարցեր, ապա խնդրենք պարոն Օսիկյանին, գիտեք, ավելի լավ է մենք քննարկման ֆորմատը ընդունենք, քան հարց ու պատասխանի, եթե կոնկրետ հարց ու պատասխանի խնդիր կա, եկեք տանք և ավարտենք: Վերջին հարցը խնդրեմ, և դրանից հետո սուրճի ընդմիջում անենք, որովհետև դրանից հետո ունենք երկու ներկայացում ևս և քննարկում: Երկու ներկայացումները նվիրված կլինեն նոր ռազմավարության մշակմանը, և եթե հարցերը կապված են ռազմավարության մշակման կամ ռազմավարության հետ, ես կառաջարկեմ, որպեսզի դուք դրանք տաք հետո, իսկ այս պահին եթե ունեք կոնկրետ GRECO-ին վերաբերվող, ACN-ին վերաբերվող, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիային վերաբերվող հարցեր, խնդրեմ:

Աբգար Եղոյան, “Սպառողների իրավունքների պաշտպանություն” ՀԿ.

Ես ուղղակի նախկին զեկուցողներին կուզենայի հարցնել, ըստ իրենց, որո՞նք են այն հիմնական խոչընդոտները, որոնք խանգարում են GRECO-ի, ՄԱԿ-ի կոնվենցիայի, բոլոր ընդունված պարտավորությունների ռեալ կիրառմանը կյանքում, որի մասին որ խոսվում էր: Այսինքն, ինչպիսի՞ խոչընդոտներ, մեկ-երկու, իրենց մեկնաբանությամբ, որովհետև, բնականաբար, համենայն դեպս որոշ մարդիկ գիտեին, որ ինչ քանակությամբ ընդունվել է. ինչ չէ: Շնորհակալություն:

Քրիստինե Բարսեղյան.

Պարոն Եղոյան, Ձեր թույլտվությամբ ես մի նախադասություն ավելացնեմ, նշել, որոնք են խոչընդոտները, բայց ես կառաջարկեի, քանի որ այստեղ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ են, եկեք հարցնենք և հասկանանք, թե մեր ներգրավվածությունը այդ միջազգային պարտականություններին բավարարու՞մ է, մենք ինչպե՞ս կարող ենք նրանց օգնել, ինչպե՞ս են նրանք պատկերացնում քաղաքացիական հասարակության ներգրավումը կոնկրետ կոնվենցիաների մասով:

Պարոն Օսիկյան.

Ես կարճ ուղղակի նշեմ, քանի որ մեր ռազմավարության ծրագրում ամբողջն է նշված կամ հիմնական ուղղությունները, ընդհանրապես տարբեր մակարդակի կոռուպցիոն երևույթներ կան կամ ընդունված է համարել երկու հիմնական՝ վերևների և ներքևների: Կան նաև մասնավոր սեկտորում իհարկե կոռուպցիա, բայց բոլոր դեպքերում իհարկե կոռուպցիան որպես երևույթ չի ծնվել ոչ Հայաստանի Հանրապետությունում, ոչ էլ տարիներ առաջ, այսինքն դա մշտական գոյություն ունեցող երևույթ է, որի դեմ ամբողջ աշխարհն է պայքարում, բայց հիմնական իմ անձնական դիտարկումները մի շարք երկրների փորձագետների գնահատման արդյունք է, դրանցից առաջինը որոշակի բարդությամբ է, հոգեբանական բարդությամբ, որը այսպես իներցիայով կարծես գնում է և դրա համար իսկապես շատ կարևոր է քաղաքական կամքի, առավել գործունե կամքի դրսևորումը, որը մեծ ազդեցություն կարող է ունենալ թե պատժողական քաղաքականության իմաստով, և թե ընդհանրապես ամեն ինչ պետք է գա ըստ էության վերևից, բացի այդ համապատասխան օրենսդրական փոփոխությունները, որոնք պետք է կատարվեն, դրանք բավարար չեն: Շատ կարևոր է նաև սոցիալական խնդիրը, դա աշխատավարձի խնդիրն է, որը շատ լուրջ, իսկապես, որոշ ոլորտներում, որտեղ կան կոռուպցիոն երևույթներ, պայմանավորված է նաև, ուղղակի կյանքում չդրսևորվելու հետ, և մարդիկ ձործում են համապատասխան կոռուպցիոն դրսևորումների ճանապարհով ցածր աշխատավարձի, սոցիալական ապահովության պայմաններում որոշակի քայլերի գնալ: Այսինքն բարդ մեխանիզմ է երևույթը, որը ծնում է համապատասխան կոռուպցիայի երևույթը, և այս ամբողջի նկարագիրը նաև փորձագետները իրենք տվել են մեր ռազմավարության ծրագրի մեջ, թե որո՞նք են այն հիմնական պատճառները, պայմանները, որոնք ծնում են կոռուպցիան: Ես կարծում եմ, բոլորը միասին վերցրած, և հենց դրան էլ ուղղված է մեր ռազմավարության ծրագիրը, մասնավորապես աշխատավարձերի բարձրացումը որպես խնդիր դրված է պետական ծառայության այն ոլորտներում, որտեղ իսկապես մեծ են կոռուպցիոն ռիսկերը: Բայց ես պետք է նշեմ, քրեական իրավունքից կար մի կատեգորիա, որոնք անկախ պատժի սպառնալիքից, կա պատիժ թե չկա, ուղղակի հանցանք չեն կատարում, դա մի խումբ էր, այսինքն ուզում եք նախատեսել քրեական օրենսգրքով մահապատիժ, եթե նա որոշել է հանցագործություն կատարի, կատարելու, կա մեկ այլ կոնտինգենտ, որը չի կատարում, ելնելով պատժի սպառնալիքից, և կա երրորդը, որն ուղղակի անկախ նրանից, դու ինչ կնախատեսես, նա երբեք համապատասխան արարքը չի կատարելու: Դա թերևս ամենամաքուր կոնտինգենտն է, քրեական օրենսդրության մեջ ընդունված խումբն է, որոնք չեն կատարում, այսինքն կան տարբեր երևույթներ, տարբեր մարդիկ, որոնք տարբեր երևույթներից կամ հիմքերից դրված պատճառներից կատարում են այս կամ այն արարքը: Դրա համար մեր հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը պետք է բոլոր ուղղություններով ըստ էության որոշումներ կայացնի, որպեսզի երևույթը իսպառ վերանա: Տիկին Ալավերդյան, ես չեմ հավատում, որ կոռուպցիան որևէ երկրում հնարավոր է վերացնել, համենայն դեպս մոտ ժամանակներում, բայց բոլոր դեպքերում եթե քայլեր չարվի այդ ուղղությամբ, ինքը երևույթը գնալով խորանալու է և իսկապես ամբողջ պետական համակարգը, և ընդհանրապես հասարակությունը և պետությունը, բայց որ արդյունքներ ունենալու ենք, ես հավատում եմ ուղղակի հաշվի առնելով թե քաղաքական կամքը,

ներկայիս համապատասխան ծրագրերը, որոնց ուղղությամբ մենք աշխատանքներ կատարում ենք:

Տիկին Ալավերդյան.

Ես խոսում եմ ընդհանուր առմամբ ոչ թե գրավոր նյութի մասին, որտեղ մենք ապացուցում ենք, թե ինչքան լավն ենք, մեզ ենք ապացուցում թե դրսին, ես խոսում եմ իրականության մասին, որտեղ ոչ թե քաղաքական կամքի պակաս կա, կա քաղաքական պարտադրանք կոռուպցիայի համատարած, և սա է բոլորիս անհանգստացնում, և երբ որ քաղաքացիական հասարակության ակտիվ գործող կազմակերպությունները օբստրուկցիայի են ենթարկվում և դրա հետևանքով դուրս են գալիս հանձնաժողովի աշխատանքներից, սա է ամենամեծ ցուցանիշը, իրական պայքարը ընթանում է Հայաստանում կոռուպցիայի դեմ, թե ոչ, որովհետև մենք պետք է պարզ խոսենք, որովհետև մենք ունենք այդ հնարավորությունը, և բոլոր այս զեկույցը որ տրված է, շատ բարձր գնահատական է տրված Հայաստանի քաղաքացիական հասարակության զարգացման դինամիկային: Մենք խոսում ենք պարզ և քննադատում ենք, որովհետև ի զորու ենք դա հաղթահարել ոչ թե միջազգային չափանիշին ուղղակի գրավոր համապատասխանելու համար, ես շատ բարձր եմ գնահատում բոլոր միջազգային փաստաթղթերը, այլ մենք ունենք իրական խնդիր, համապատասխանեցնենք մեր կյանքի ընթացքում հանդիպող երևույթների բացառումը այդ պահանջների հետ: Մենք պատրաստ ենք դրան, ես մինչև անգամ ուզում եմ հուսալ կամ հավատալ, որ և նոր իշխանության մեջ կան այդպիսի միտումներ, բայց երբ որ մենք խոսում ենք զուտ թե քսանչորսից կատարել ենք այսքանը կամ չենք կատարել, մենք մեզ դուրս ենք հանում իրական պայքարի դաշտից, և դա վերաբերում է թե նոր ռազմավարությանը, թե անցածին, և նոր ցուցանիշներով ստացվում է, որ մենք անցած ցուցանիշները բավականին լավ էլ կատարել ենք, իսկ կոռուպցիան աճել է, պետք չի բերել հերթական աբսուրդի, կամ մենք պետք է ասենք, որ Հայաստանը պետք է ենթարկվի բոլորովին այլ մեթոդներով կոռուպցիայի դեմ պայքարելու կամ մոնիտորինգի: Դրա համար ես անընդմեջ ու հանձնաժողովի անդամ լինելով, ես անընդհատ պատասխանատվության տակ եմ ինձ զգում, և եթե խոսելու ժամանակ, գրելու ժամանակ կարծես թե ամեն ինչ լավ է, ես դուրս եմ գալիս պատերից դուրս, հանդիպում եմ բիզնեսմեներին, հասարակ մարդկանց, սոցիալապես անապահով մարդկանց, որոնք ավելի են իրավական խոցելի, և սա արդեն կոռուպցիա չէ, սա դրամաշորթման ինչ-որ մի խայտառակ ձև է, սա է պատճառը, որ մենք ուզում ենք ձեզանից լսել, թե ինչքանով են միջազգային այդ պահանջները գալիս և համապատասխանում մեր ազգային պահանջին, պարոն Օսիկյան, ես չեմ կարող չասել, չնայած լավ բաներ են արվում թե ձեր գերատեսչությունում, թե մաքսայինում, ու դա բազմաթիվ անգամ հնչեցվում է, ես հանդիպում եմ փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ, և նրանք ասում են, նոր երևույթ կա, միջնորդ կա, միջնորդի ձևով է իրականանում կոռուպցիան, ես չեմ կարող դրան չարձագանքել, դա է խնդիրը, եկեք գտնենք, որ մենք ինքներս ինքնախաբեություն չասեն, բայց ինքնահանգստացման ճանապարհով չգնանք: Խնդիրը, դուք էլ եք տվել տվյալները, լսելիությունը, տոկոսը իջնում է գնալով այսքան խոսացող ազգի մեջ, ասում է ասողին լսող է պետք, բայց այդ լսողը չկա:

Պարոն Օսիկյան.

Տիկին Ալավերդյան, ես նշեցի ամենից սկզբում, որ կարելի է շատ լավ կատարողական ունենալ, բայց ըստ էության կյանքում դրանց արդյունքները կամ շուտ չունենալ, ես նշեցի, որ դա համապարփակ ծրագիր է, այսինքն միայն մեկ ուղղությամբ կատարողականը չի կարող հանգեցնել, և եթե դուք մեր հանձնաժողովի նիստից դուրս եք գալիս և բոլոր մարդկանցից լսեիք, որ ամեն ինչ շատ լավ է, բնական է, ոչ կհավաքվեինք, ոչ կքննարկեինք, ոչ էլ ծրագիր կընդունեինք, և դրան է ուղղված այս ամբողջ ծրագիրը, և հավատալ է պետք ուղղակի, որ շատ մոտ ապագայում դուք դրանց արդյունքները կտեսնեք ու լավ էլ կզգաք, որ այդ հանձնաժողովի անդամ եք: Շնորհակալություն:

Francois Vezina:

If I can just add - Countries where there has been a successful fight against corruption have been characterized by a strong civil society, strong media, strong political will on the part of the government – all these combined help to bring about change in these countries – change in attitude, change in laws, change in implementation of the laws. Usually if all these forces are combined you are able to fight corruption and change the situation in the country.

Սակունց Արթուր:

Ես ուղղակի, քանի որ պարոն Օսիկյանը նաև հարկային պետական ծառայության աշխատակից է, ես ուղղակի ուզում եմ, որպես ինֆորմացիա հայտնեմ, որ այն նույն ժամանակ, որ մենք խոսում ենք հակակոռուպցիոն ծրագրի մասին, հարկային տեսչությունների կողմից շարունակվում են տնտեսավարող սուբյեկտներից հարկային կանխավճարների հավաքագրման գործընթացը, այսինքն մարդը տնտեսավարող սուբյեկտ է, մինչև շահույթ ստանալը արդեն իսկ մեկ-երկու ամիս արդեն իսկ նախորդք հավաքվում են դրանց տվյալները, դա տիպիկ կոռուպցիոն դրսևորում է, սա չգրված կանոնի ուժով է, երբ հարկային տեսչության պետը ուղղակի ասում է՝ որպես ընկեր խնդրում եմ ինձ օգնի, որպեսզի ես պլանը կատարեմ: Սա հենց հիմա էլ շարունակվում է, սա պետք է հենց հիմա էլ դադարեցվի, որպեսզի արեսսինգը և կոռուպցիոն այդ երևույթները տնտեսավարող սուբյեկտների գործունեության դաշտում հարկային մարմինների կողմից բացառվի: Կա՞ նման կամք, և ո՞վ է նման հրաման տալիս, թե դա գերատեսչության պետի ինքնագործունեությունն է:

Պարոն Օսիկյան:

Թույլ տվեք ես պատասխանեմ, քանի թր ըստ էության դուք փորձում եք անընդհատ նորից շեղվել ընդհանուր կոնտեքստից այսօրվա ֆորումի, բայց ես պատրաստ եմ ցանկացախ հարցի պատասխանելու հիմա, թե դրանից հետո: Ցանկացած խնդիր, եթե ունեք բողոք, կարող եք ներկայացնել, համաձայն եմ, որ այդ երևույթները կան, ես չեմ ժխտում, որ կան, մենք նման բողոքներ ստացել ենք, զուտ պլանային առաջարկներից ելնելով իսկապես գերատեսչության պետերը շատ ժամանակ կամ շատ դեպքերում փորձում են, բայց դա անընդունելի է, և արգելված է օրենքով, եթե Դուք կոնկրետ փաստ ունեք, այսինքն մի ապրիորի խնդրում եմ խոսեք, կոնկրետ փաստ ներկայացրեք, որ որևէ տեսչության պետ կանխակալ նախապես վճարվելի գումարը ստիպել է, որպեսզի հարկատուն վճարի, խնդրեմ

ներկայացրեք, քննարկենք, մենք ունենք, ընդ որում ասեմ, նոր գանգատարկման հանձնաժողով, պարոն Սակունց, լսու՞մ եք, ստեղծվել է նոր գանգատարկման հանձնաժողով, որը նոր ընթացակարգի հիման վրա պետք է առավել մանրամասն քննարկի ցանկացած բողոք: Երեկ է հրապարակվել տեղեկագրում, որ ընթացակարգը գանգատարկման հանձնաժողովի երկու շաբաթվա ընթացքում արդեն իսկ կաշխատի նոր հանձնաժողով նոր ընթացակարգով, ցանկացած բողոք - գանգատ կարող եք ներկայացվել այդտեղ: Եթե կլինեն նորից բողոքներ, խնդրեմ, կարող ենք քննարկել, բայց ես կարող եմ նշել, ո նման երևույթներ մենք էլ ենք լսել, ծառայողական քննություն անգամ տեղի է ունեցել նման հարցի հետ կապված, և մի քանի աշխատողներ անգամ պատասխանատվության են ենթարկվել, բայց որ ի սպառ վերացել է, ես չեմ կարող այս պահին ասել:

Քրիստինե Բարսեղյան.

Շատ լավ, շնորհակալություն հարցերի և պատասխանների համար, եկեք քսան րոպե ընդմիջում անենք և վերադառնանք:

Քրիստինե Բարսեղյան.

Անցնենք ֆորումի երրորդ մասին, այժմ խոսքը տրվում է հակակոռուպցիոն մոնիտորինգի հանձնաժողովի փորձագիտական խմբի նախագահ պարոն Արմեն Խուդավերդյանին, որը կներկայացնի ռազմավարության այն մասը, որը նվիրված է Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարմանը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում, խնդրեմ, պարոն Խուդավերդյան:

Արմեն Խուդավերդյան.

Շնորհակալ եմ, բարև ձեզ, իհարկե ես կփորձեմ փոքր-ինչ ավելի լայն ներկայացնել, քան միայն ռազմավարության այն հատվածը, որը որ առնչվում է միջազգային պարտավորություններին: Նախ ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որը նշեց նաև իր խոսքում հանրապետության վարչապետը, որ կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները օրենսդրական դաշտում մեր օրենքներն են, մեր ընդունած խաղի կանոններն են, որոնք մենք պետք է պահպանենք: Երկրորդ մոտեցումը, ես կարծում եմ, այստեղ նաև այդ հարցը շատ շոշափվեց, այդ միջազգային պարտավորությունները, կոչեցյալները ընդամենը սահմանում են այն օրենսդրական փոփոխությունների կամ ստանդարտների մակարդակը, որոնք որ մենք պետք է ապահովենք՝ միանալով միջազգային նորմերին, օրենքներին, հետևաբար այս տեսանկյունից պետք է ասեմ, առաջին ռազմավարության հետ համեմատած, մենք ունենք բավականին առաջընթաց, երբ այսօր ազատ խոսում ենք, որ մի շարք կարևորագույն, ես կասեի ամենակարևոր միջազգային կոնվենցիաներով սահմանված փաստաթղթեր մեր Ազգային ժողովի կողմից ընդունվել են, Հայաստանը դա վավերացրել է և մենք ձեռնամուխ

ենք եղել այդ փաստաթղթերի սահմանված դրույթների իրականությանը: Այս տեսանկյունից ես ուզում եմ ձեզ ներկայացնել, որ դեռևս այս տարվա եթե չեմ սխալվում փետրվարին ունեցանք համանման մեկ ֆորում, որտեղ ներկայացվեց հակակոռուպցիոն ռազմավարության, նոր ռազմավարության առաջարկը, դուք բոլորդ կարող եք ծանոթանալ կառավարության էլեկտրոնային կայքում: Նոր ռազմավարության մշակման համար, բոլորդ գիտեք, ստեղծված է փորձագիտական խումբ մոնիտորինգի հանձնաժողովի ներքո, որը ղեկավարում եմ ես, փորձագիտական խմբում ընդգրկված են անկախ փորձագետներ, այդ թվում ես, որոնք ներկայացված են նաև այստեղ հակակոռուպցիոն քաղաքականության մասով, իրավական ապահովման մասով, քաղաքացիական հասարակության մոնիտորինգի համակարգի մասով: Այս տեսանկյունից փորձագիտական խմբին տրամադրվող օժանդակությունը ԵԱՀԿ գրասենյակի, ԱՄՆ ՄԶԳ-ի, ինչու չէ, նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի կողմից, ողջունելի է և մենք կանխօրոք մեր շնորհակալությունն ենք հայտնում այդ աշխատանքներին օժանդակելու համար: Վերադառնալով նոր ռազմավարությանը և Հայաստանի ստանձնած պարտավորություններին, ուզում եմ նշել, որ ըստ ռազմավարության, եթե կառուցվածքին անդրադառնանք, դուք կնկատեք, որ այսօր ամբողջ օրը ձեզ ներկայացված էր միջազգային փաստաթղթերի հիմնական դրույթները նույնիսկ հարցադրումներով, գլուխների հարցադրումներով արտացոլված է մեր ռազմավարության տեխնիկական առաջադրանքում: Այսօրվա դրությամբ մի քանի խոսք ընթացքի վերաբերյալ, նոր ռազմավարության ուղղությամբ արդեն առաւին գլուխը մշակվել, նախապատրաստվել է, քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, քննարկվել է նաև միջազգային աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ ԵԱՀԿ-ի օժանդակությամբ, փաստաթուղթը քննարկվել է կոռուպցիայի դեմ պայքարի մոնիտորինգի հանձնաժողովում վերջերս և վերջերս, մի քանի օր առաջ ներկայացվել է կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստի քննարկմանը և այնտեղ ստացել է ընդհանուր առմամբ հավանություն: Հուսով եմ, որ առաջիկայում փաստաթուղթը կտեղադրվի էլեկտրոնային, այդ մասը, առաջին գլխի հատվածը հնարավորություն կունենանք տեղադրելու կառավարության էլեկտրոնային կայքում, բոլորին հասանելի կլինի: Ի՞նչ հարցադրումներ, ի՞նչ մոտեցումներ են առաջին գլխում նախանշված, որոնք ուղղակիորեն ապահովում են նաև միջազգային մեր պարտավորությունները: Առաջինը, որ մենք կարողացանք առաջին անգամ կոռուպցիայի մակարդակի գնահատման, նրա տարածվածության, տեսակների և վերջապես դինամիկայի վերաբերյալ օգտագործել շատ հարուստ, շատ միջազգային կազմակերպությունների կողմից կիրառվող և օգտագործվող ցուցանիշների համակարգ, տվյալների բազաներ և այլն, որոնք արտացոլված են: Բերեն երկու օրինակ, կոռուպցիայի ընկալման համաթիվը Transparency International – ի, ինչպես նաև կոռուպցիայի հսկողության ինդեքսը Համաշխարհային բանկի, այս երկուսի դինամիկան բնութագրվեց, ներկայացվեց: Ըստ տեսակների, խոսքը վերաբերում է գործառնական, վարչական, քաղաքական կոռուպցիային, նույնպես համապատասխան բնութագրող ցուցանիշներով, որոնք մանրամասն ներկայացված են աշխատանքում: Երկրորդ կարևորագույն դրույթը այս նոր ռազմավարության առաջին գլխում նորովի և սկզբունքորեն ներկայացվեց առաջին հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի կատարման արդյունքները, այստեղ հարցադրումներ եղան, թե ինչ արդյունքներ ենք մենք ունեցել, մենք ունեինք նախնական փաստաթուղթ, որը կա էլեկտրոնային կայքում, և որտեղ միայն վարչական մոնիտորինգ էր

արված, թե նախանշված փաստաթղթերը ընդունվել են, չեն ընդունվել կամ ընթացքի մեջ են, այս անգամ փաստաթղթի մեջ տրված է բովանդակային կատարողականը, թե բովանդակային իմաստով ինչպիսի՞ առաջընթաց կա, որտե՞ղ են բացերը, հստակ նշված են, թե մենք ինչ բացեր ունենք, բացթողումներ, և ինչպիսի դասեր ենք քաղել նաև առաջին ռազմավարության կիրառման ժամանակ: Եվ վերջապես երրորդ փոքրիկ պարագրաֆը, որն ուղղակիորեն վերաբերում է միջազգային պարտավորություններին: Այսօր հիմնականում շատ մանրամասն ձեզ ներկայացվեց հիմնական փաստաթղթերից ՄԱԿ-ի կոնվենցիան, GRECO-ի, ինչպես նաև Տնտեսական Զարգացման և Համագործակցության կազմակերպության հակակոռուպցիոն ցանցի կողմից իրականացվող միջոցառումները: Ուզում եմ անդրադառնալ այդ հարցերին, որ սկզբունքորեն պետք չէ հակասություն գտնել այդ եզրակացություններում կամ նրանց կողմից նախանշված գնահատականների և կոռուպցիայի մակարդակի Հայաստանում տիրող իրավիճակի վերաբերյալ, այստեղ նշեց նաև վարչապետը, մենք էլ ֆիկսել ենք նաև փաստաթղթում, Հայաստանը բավականին մեծ առաջընթաց ունի օրենսդրական դաշտի կարգավորման ուղղությամբ, բավականին մեծ առաջընթաց ունենք նաև պետական ծառայության համակարգի կայացման, արդյունավետ կառավարման համակարգում ձեռնարկած քայլերի ուղղությամբ, թե օրենսդրական մասով և թե կիրառման մասով, բայց դա չի նշանակում, որ ամեն ինչ արդեն արված է, էլ անելիքներ չկան, հակառակը, անելիքներն ավելի շատ են, և հիմնական բացերից մեկը հենց այս մասով դրանց կիրառումն է, կյանքի կոչելն է և արդյունքներ սահմանելը: Մյուս կարևորագույն հարցադրումը, որն էլի համապատասխանության խնդիր ենք մենք լուծել, դա առաջին անգամ փորձել ենք նաև արդեն երկրորդ գլխի վերաբերյալ միտումները կամ մեր արդյունքները ֆիկսել կոնկրետ ցուցանիշներով: Այսուհետ, ինչպես վարչապետը նշեց իր ելույթում, մենք էլ փորձագետների մոմենտով սահմանել ենք, թե մենք հենց այնպես չենք հայտարարելու, որ մենք կոռուպցիան կրճատելու ենք, կոնկրետ հայտարարելու ենք, թե կոռուպցիան ինչքան է կրճատվելու և կոնկրետ ցուցանիշներով, և այդ ինչ մակարդակի ենք մենք հասնելու, պատկերավոր ասած, թե ջերմաստիճանը հիվանդի ինչքան ենք իջեցնելու և որ մակարդակին ենք կանգնեցնելու: Վարչապետը այսօր տվեց արդեն իր ելույթում, որ մեր թիրախը, նպատակը՝ հասնել Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի միջին մակարդակին, որոնք այսօր բնութագրվում են Բուլղարիայում և Ռումինիայում, որոնք իրավ անդամակցելով Եվրոմիությանը, արդեն ունեն բավականին մեծ հաջողություններ: Մյուս գլուխներում, երրորդ գլուխը ռազմավարության, որի վրա այսօր փորձագետները աշխատում են, ընթացքի մեջ է, ամբողջությամբ նվիրված է այն գործիքներին, որոնք այսօրվա առաջին կետում ելույթ ունեցողները նշեցին, խոսքը վերաբերում է կոռուպցիայի կանխարգելման գործիքներին, բացահայտմանը կամ քրեականացմանը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներգրավմանն ու կրթմանը: Այս գործիքների մասով որոշ չափով մենք իհարկե օրենսդրական լավ առաջընթաց ունենք, սակայն այստեղ նույնպես այն հանձնառությունները կամ երաշխավորությունները, որոնք տրված էին վերոնշյալ փաստաթղթերում, դեռևս լուծումներ պահանջում են, նույն բաժիններում շարադրված: Բերեմ մեկ օրինակ, որպեսզի ձեզ համար պատկերավոր լինի: Օրենսդրությամբ մենք ունենք սահմանված պետական ծառայության բոլոր տեսակներում ծառայողներին ներկայացվող սահմանափակումներ, որը բերում է այլ խոսքով ասած շահերի բախման: Օրենսդրությամբ ունենք սահմանված, բայց այս պրակտիկ կյանքում կիրառման մեխանիզմները մենք չունենք: Եվ իրավ մենք խնդիր

ենք դնելու, որ Հայաստանում պետական ծառայության, ինչպես նաև հանրային ծառայության մակարդակով ունենանք շահերի բախման լավագույն ինստիտուտ: Պետք է այստեղ նշեմ, որ երկու օր առաջ մենք վերադարձանք Թբիլիսիում կայացած Տնտեսական Ջարգացման և Համագործակցության կազմակերպության հակակոռուպցիոն ցանցի երկրների թեմատիկ հավաքին, որոնց հարցերի շրջանակը համընկնում էր երրորդ գլխում սահմանված հիմնական երկրներին, և մենք լավագույն փորձագետներս էինք այնտեղ ներկայացված, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչներ, որոնք լավագույնս ծանոթացան այդ փորձին: Նշեմ, որ դրանց ցանկում ընդգրկված են ինչպես հակակոռուպցիոն քաղաքականության մարմիններ, շահերի բախման ինստիտուտ, քաղաքացիական հասարակության ներգրավում, այնպես էլ մի շատ կարևոր բաժին, որը երբևիցե մենք չենք անդրադարձել, դա մասնավոր հատվածում կոռուպցիան է, որն արտացոլված է ինչպես ՄԱԿ-ի կոնվենցիայում, այնպես էլ մյուս փաստաթղթերում, և մենք մեր ռազմավարության մեջ ունենք առանձին բաժին՝ կոռուպցիայի դեմ պայքարը մասնավոր հատվածում: Սա առաջին անգամ է ներկայացվելու, և փորձագետների մակարդակով մենք այսօր ունենք մոտավոր պատկերացումներ, թե ինչից սկսել այս ոլորտում, ինչ քայլերով գնանք, որովհետև ամբողջությամբ չենք կարող հասնել այն երանելիին, որը կա, ենթադրենք, այլ զարգացած երկրներում, երբ որ մասնավոր ընկերությունը շատ դեպքերում իր բիզնեսի շահերից չբխող սահմանափակումներ է կիրառում: Ես ուզում եմ նաև ձեզ հիշեցնել, որ բացի այս երեք կարևորագույն փաստաթղթերից, իհարկե այստեղ կան քրեական և քաղաքացիական իրավունքի կոնվենցիաները, որոնց մասին իրավական դաշտում կխոսեն ավելի մանրամասն, ձեզ ներկայացնեմ նաև մի քանի միջազգային պարտավորություններ, խոսքը, դուք բոլորդ գիտեք, Հազարամյակի Մարտահրավերներ Հիմնադրամի շրջանակներում կնքած կառավարության միջպետական պայմանագիրն է, որտեղ նույնպես նրա մոնիտորինգի ցուցանիշների մեջ սահմանված են արդար կառավարման վեց ցուցանիշներ, որոնցից մեկը կոռուպցիայի հսկողության ցուցանիշն է, և այս տեսանկյունից սա նույնպես մեր օրենքն է, մեր ռազմավարությունից: Խոսքս վերաբերում է նաև ՆԱՏՕ-ի հետ համագործակցության շրջանակներում ձեռք բերված համաձայնություններին, որ նույնպես արտացոլված են փաստաթղթում: Կցանկանայի նաև ձեր ուշադրությունը բևեռել, որ ռազմավարության մեջ բոլոր այս փաստաթղթերը պահանջում են մոնիտորինգի համակարգ, և եթե այսօր այս ամբողջից ներկայացնողները խոսեցին GRECO-ի կողմից կազմակերպված մոնիտորինգի մեխանիզմից և դրա արդյունքներից, ինչպես նաև ներկայացվեց հակակոռուպցիոն ցանցի մոնիտորինգի համակարգը, ապա ուզում եմ նշել, որ դեռևս ՄԱԿ-ի կոնվենցիայի մոնիտորինգի համակարգը հստակ ձևավորված չէ, և Թբիլիսիի հանդիպման ժամանակ կողմնորոշում եղավ, որ այս երկու կազմակերպությունները, մոնիտորինգի համակարգը կարող է օգտակար լինել նաև ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մոնիտորինգի համակարգի ձևավորման գործում, և այս տեսանկյունից նաև, այս պայմանների տեսանկյունից, ռազմավարության մեջ մենք առանձին գլխով փորձ ենք արել ձևավորելու մեր ռազմավարության մոնիտորինգի համակարգը: Հանրապետության վարչապետը այսօր ելույթում նշեց, ոչ պետք է այդ մոնիտորինգի համակարգը հստակ լինի և քաղաքացիական հասարակության համար ընկալելի լինի, և կարողանա մոնիտորինգ անի, ունենք նաև այդ ուղղությամբ որոշ արդյունքներ, զուտ միջազգային ծրագրերի օժանդակությամբ, խոսքը նաև

ՄԱԿ-ի ծրագրի, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանը մոնիտորինգի համակարգում ներգրավելու փորձերի մասին է, որը պետք է հիմք ընդունենք և դարձնենք մեր ապագա ռազմավարական ծրագրում հիմնական դրույթները սահմանելու ժամանակ: Իհարկե կարևոր խնդիր է նաև այդ մոնիտորինգի ցուցանիշների համակարգն ունենալ, և հնարավորություն, որ վերջապես մենք մեր ուժերով կարողանանք հարցումներ կազմակերպել կոռուպցիայի վիճակը և մակարդակը գնահատելու համար, միաժամանակ օգտագործելով միջազգային ցուցանիշներ: Ռազմավարությունը ոչ միայն նախատեսում է փաստաթուղթ, որը տեսական դրույթներ կպարունակի, այլ ռազմավարությունը ունենալու է նաև ծրագրային միջոցառումների պլան, որտեղ մանրամասն նշվելու են միջոցառումները և ստացվելիք ակնկալիք արդյունքները, իրենց ինդիկատորներով, մոնիտորինգի ցուցանիշներով: Սրանով ես ուզում եմ իմ խոսքը ավարտել և ավելի շատ հնարավորություն տալ ձեզ, մեր ժամանակը սուղ է, որ պատասխանեմ մյուս հարցադրումներին: Շնորհակալություն:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, ես առաջարկ ունեմ, լսենք երկրորդ ներկայացումը ևս, և ընդհանուր քննարկում ունենանք, կարծում եք այդպես ավելի նպատակահարմար կլինի^o:

Շնորհակալություն, օրեր առաջ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ հանդիպում էր հանրապետության վարչապետի հետ, և պարոն վարչապետը շատ խիստ և լուրջ տոնով ևս մեկ անգամ հայտարարեց. “ Մենք հրապարակային ենք աշխատելու, ինչու^o, որովհետև դա մեզ ուժեղ է դարձնելու”: Ես իսկապես ողջունում եմ այս հայտարարությունը, որը բազմիցս արդեն, հատկապես վերջին մեկ-երկու ամիսների ընթացքում կրկնվում է, և վերջապես տեսնում եմ, որ իսկապես բարձրագույն իշխանությունը հասկանում է կամ հասկացել է, որ հրապարակային ընտրությունը միայն բարեկամ է, և ոչ թշնամի, և կարծում եմ, որ նոր հակակոռուպցիոն ռազմավարության և մշակման իրականացման ամբողջ գործընթացի հաջողությունը հիմնականում երկու սկզբունքներով է պայմանավորված. առաջինը` ապահովել հնարավորինս բացություն և հրապարակայնություն, երկրորդը` ապահովել քաղաքացիական հասարակության անմիջական, ուղղակի ներգրավվածությունը ինչպես փաստաթղթի ձևավորման, մշակման գործընթացում, այնպես էլ դրա իրականացման գործընթացում: Ինչպիսի ներդրում այնուամենայնիվ կարող են ունենալ քաղաքացիական հասարակության խմբերը այս բարդ գործընթացը իրականացնելու ընթացքում: Առաջինը, ինչպես ակնհայտ է, այդ ռազմավարությունը մշակելու ընթացքում ունենալ ուղղակի ներգրավվածություն, ընդ որում դա չպետք է կրի ձևական բնույթ, քաղաքացիական հասարակության խմբերը պետք է դառնան կոռուպցիայի դեմ պայքարում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական գործընկերը, առաջին հերթին ակտիվորեն նպաստելով կոռուպցիայի նկատմամբ հանրության անհանդուրժողականության արմատավորմանը և միջոցառումների իրականացմանը: Ընդ որում այս գործընթացում ոչ մեկը բարոյական իրավունք չունի մի կողմ քաշվելու, հայտարարելու, որ ամեն ինչ

անհմաստ է ի սկզբանե, առանց փորձ անելու, իր ներդրումը և լուծման ունենալու այս գործընթացում: Պետությունը իր կողմից էլ պիտի երաշխավորի, որ հասարակության յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունենա իր խոսքը ասելու մի կողմից, բայց մյուս կողմից ասված խոսքը պետք է նաև լսելի դառնա և հաշվի առնվի: Որպես ուղղակի բավականին դրական քայլ ուզում եմ նշել, որ հակակոռուպցիոն ռազմավարությունը մշակող փորձագիտական խմբում ներգրավվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, մասնավորապես Ինֆորմացիայի Ազատության Կենտրոնի փորձագետները, և կենտրոնը նաև ստանձնել է որոշակի առումով փորձագիտական խմբի և քաղաքացիական հասարակության այդ իմ նշած ակտիվ կապի ապահովումը և հետադարձ կապի ապահովման խնդիրը: Երկրորդ դերը, որ կարող է իրականացնել քաղաքացիական հասարակությունը, հենց բուն ռազմավարական փաստաթղթի իրականացման գործընթացում է, ես լիովին կհսում եմ պարոն Վեգինայի այն տեսակետը, որ մեր բոլոր ջանքերը չպետք է ուղղված լինեն մի գեղեցիկ, հրաշալի փաստաթղթի կազմմանը: Իսկապես, կարող ենք շատ լավ փաստաթուղթ ստեղծել, բայց անիրականալի և անիրատեսական: Եվ այստեղ է հատկապես, որ քաղաքացիական հասարակությունը կարող է իր ողջ գիտելիքը, փորձը այս ամբողջ տարիների ընթացքում կուտակած կիսել փորձագիտական խմբի հետ մշակման փուլում, ինչպես նաև իրականացման փուլում: Կարծում եմ, որ պետության և քաղաքացիական հասարակության կառույցների համագործակցությունը պետք է հենվի փոխվստահության և փոխօգնության սկզբունքների վրա: Քաղաքացիական հասարակության և պետական մարմինները պետք է նստեն կլոր սեղանի շուրջ, և ինչքան հաճախ, այնքան լավ, և ինչքան միմյանց նկատմամբ հանդուրժող և պատրաստ լսելու միմյանց, այնքան լավ: Երրորդ դերը, որ կարող է ստանձնել քաղաքացիական հասարակությունը, դա կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության իրականացման ընթացիկ արդյունքների վերաբերյալ հանրությանը և քաղաքացիական հասարակության կառույցներին կանոնավոր իրազեկելու գործառույթն է: Սա հենց այն խնդիրն է, որ անընդհատ նշվում է, որ իսկապես գուցե և գործառույթը գնում է, ինչ որ արդյունքներ, ձեռքբերումներ կան, նաև ձախողումներ կան, բայց հասարակությունը ընդհանրապես օտարված է մնում այս տեղեկատվական հոսքից, եթե նույնիսկ լինում է տեղեկատվական հոսք, ապա շատ ցաքուցրիվ, չհամակարգված, և ի վերջո ես ուղղակի բերեմ Transparency International-ի “Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում” զեկույցի տվյալը, ըստ որի քաղաքացիների 69.4 % նույնիսկ տեղյակ չէ, որ Հայաստանի Հանրապետությունը ունի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիր, ինչ խոսք կարող է գնալ այդ ծրագրի իրականացման, հաջողության, իմացության կամ ձախողումների և կոնկրետ միջոցառումների բովանդակության մասին: Սա խիստ մտահոգիչ ցուցանիշ է, և կարծում եմ, որ բոլորս մեր խնդիրը պետք է համարենք այս ցուցանիշը որոշակիորեն նվազեցնելը, որովհետև առանց իրազեկ, տեղյակ քաղաքացիների այս գործընթացը ձախողման է ենթարկվելու: Չորրորդ դերը ըստ իս այն է. ըր քաղաքացիական հասարակությունը պետք է իրականացնի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի կատարման վերահսկողություն և մոնիտորինգ: Այս փուլում կարևորում եմ քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ընդունման գործընթացներում, նրանց համագործակցությունը հակակոռուպցիոն մարմինների հետ, ՋԼՄ-ներով հակակոռուպցիոն

քարոզչության իրականացմանը, և այն անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը, որը իսկապես այսօր շատ է կարևորվում: Հատկապես ուզում եմ նշել, որ կոռուպցիայի մասին ահազանգողները չպետք է դիտվեն որպես, խոսակցականում շատ վատ մի արտահայտություն կա, գործ տվողներ, այլ նրանք իսկապես պետք է պաշտպանված լինեն, խրախուսված լինեն, և ոչ թե խոսակցության մեջ ասեն այս մարդը գործ տվող է, նրանից պետք է խուսափել: Կարծում եմ, այստեղ հենց մենք որպես կազմակերպություններ, նաև ՋԼՄ-ները հսկայական դեր ունենք անելու այդ սկզբունքային մոտեցումը փոխելու հարցում: Թեև քաղաքացիական հասարակության կառույցների ռեսուրսները ոչ այնքան բավարար են, որոշ դեպքերում նաև աղքատիկ են, բայց քաղաքացիական հասարակությունը հարուստ է գիտելիքով և փորձով, ուստի անպայմանորեն պետք է այդ գիտելիքը և փորձը ուղղակիորեն օգտագործվի իմ նշած բոլոր փուլերում: Կանխարգելման գործառույթը ևս արդեն բազմիցս նշվեց, բայց ուզում եմ հատկապես վերջումդրան անդրադառնալ, որովհետև մենք պետք է լինենք պահանջողի դերում: Երբեք համակարգում տեղի չեն ունենա դրական տեղաշարժեր, եթե չլինի համառ պահանջողը ներքևից, և ոչ թե դա լինի մեկ-երկու ակտիվ կազմակերպությունների կամ քաղաքացիների դերով, այլ իսկապես դա լինի համընդհանուր ակտիվություն: Ես կարծում եմ, որ պետք է քաղաքացիները շարունակեն և ակտիվանան, անընդհատ հարցեր տան պետությանը և պատասխաններ պահանջեն, պահանջեն տեղեկատվության բացություն և հրապարակայնություն: Ես ուղղակի մեկ օրինակ էի ուզում բերել ահա հիմա թվականին ենք պատրաստում, կառավարության հարկային պետական ծառայությունից ստացված նախարարների գույքի և եկամուտների հայտարարագրերի մասին տեղեկանքները, որտեղ հսկայական տեղեկատվություն կա մեր օրինակ նախարարների ունեցվածքի վերաբերյալ, դրանք ստանալով մեր կազմակերպությունը հրապարակեց, բայց մամուլի գրեթե որևէ միջոց չօգտվեց դրանցից սեփական վերլուծություններ անելու, որովհետև այնտեղ հսկայական կոռուպցիոն ռիսկերի տեղեկատվություն էր պարունակում, դրանք հրապարակվեցին, բայց այդ փուլում այդ տեղեկատվությունը որևէ վերլուծության, որևէ հետաքննության առիթ չհանդիսացավ, պիտի հարցեր տան քաղաքական կուսակցությունների ֆինանսական միջոցների մասին, ընտրական կոմպանիաների ժամանակ ֆինանսավորման և դրանց ծախսերի հրապարակայնության վերաբերյալ, մի խոսքով, հարցերը պիտի լինեն բոլորի կողմից և ներառեն հնարավորինս բազմազան ոլորտներ, և ամենակարևորը, ավանդույթների ձևավորման խնդիրն են համարում, հրապարակային և բաց աշխատելու ավանդույթները, որոնք ամենադանդաղն են ձևավորվում, և ամենամեծ ներդրումները կարծում եմ, այստեղ է պետք նաև ներառել, ընդ որում ավանդույթները պետք է ձևավորել և ուսուցանելու, և պատժելու մեխանիզմներով պետական համակարգում, որը նույնպես պետք է ստանձնի քաղաքացիական հասարակությունը: Ի վերջո իմ խոսքը ուզում եմ ամփոփել նորից այն հիմնական մտքով, որ կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական գործիքը բացությունն է: Առանց այս սկզբունքի իրականացման գործընթացը ծախողվելու է, և ինչպես ընդունված է ասել, մի փոքր արևի լույսը լավագույն ախտահանումն է այս չարիքի, և քաղաքացիական հասարակությունը կարող է և պետք է աջակցի կոռուպցիայի դեմ այս պայքարին, սակայն ես կարծում եմ, որ կառավարությունն է կրում ի վերջո դրա հաջող իրականացման պատասխանատվությունը, քանի որ մենք որպես քաղաքացիներ մեր իշխանությունը վստահել ենք կառավարությանը: Շնորհակալություն:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, այժմ անցնենք հարցերին և պատասխաններին, քննարկմանը:

Արամ Գրիգորյան, “Հասարակական պաշտպանների միություն”.

Շնորհակալություն, երկու հարց ունեմ, ուղղում եմ պարոն Խուդավերդյանին:

-Պարոն Խուդավերդյան, Դուք որպես մոնիտորինգի հանձնաժողովի խմբի նախագահ ինչպե՞ս եք պատկերացնում կատարված ծրագրի արդյունքները, արդյոք Դուք արդյունքը համարում եք այն, ինչ-որ կատարվել է, քիչ առաջ ասացիք, որ որոշակի օրենքներ բոլոր դեպքերում փոփոխվել են և համապատասխանում են եվրոպական կամ մի շարք այլ կոնվենցիաների, թե Դուք Ձեր ուսումնասիրությունը ուղղում եք թե ինչպիսին է ազդեցությունը կատարվածի և չկատարվածի երևույթի վրա, և եթե Դուք ազդեցությունն եք որոշում, ինչպիսի չափորոշիչներով, և երկրորդ հարցը, հակակոռուպցիոն ռազմավարությունը իրականացնելու ժամանակ հաշվի առնվում են արդյոք, որ մեզ մոտ բոլոր դեպքերում երևույթը ծնվում է ոչ միայն օրենքների պակասից, այլ ընթացակարգերի պակասից, այսինքն չեն կիրառվում օրենքներ, լավ չեն կիրառվում: Դուք հաշվի առե՞լ եք, կամ ուսումնասիրություն ունե՞ք, կամ կա՞ն արդյոք վերլուծություններ, թե ինչպիսի ընթացակարգեր պետք է կիրառվեն, որպեսզի պարզապես կոռուպցիան դառնա ոչ շահեկան, որովհետև բոլորս խոսում ենք, որ դա արգելվելով, կամ այլ ճանապարհով երևի հնարավոր չէ, ուղղակի ես կարծում եմ, պետք է կիրառվեն ընթացակարգեր, որ այդ երևույթի շահեկան լինելը ուղղակի նվազի, որպեսզի մարդիկ, սուբյեկտները, քաղաքացիները չզնան այդ երևույթին, և երրորդ հարցս ուղղակի որպեսզի չչարաշահեն, իմ գործընկերոջն եմ ուզում ուղղել, հասարակական կազմակերպությունները, քաղաքացիական հասարակությունը ընդհանրապես շատ բան կարող է անել, բայց մենք շատ անգամ հավաքվում ենք և ասում ենք պետք է անել, կարելի է անել, ունե՞ք մշակված որևէ բան, թե ինչպե՞ս պետք է անել, ինչպե՞ս: Շնորհակալություն:

Արմեն Խուդավերդյան.

Երբ ես խոսում եմ արդյունքների գնահատման մասին, իրավ նկատի ունեմ վերջնական արդյունքը, ոչ թե ի նկատի ունեմ գործընթացը: Այս տեսակետից նույն առաջին գլխում Դուք կգտնեք եզրակացությունների մասը, որտեղ հստակ նշված է, որ չնայած հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումներով ձեռք բերված այս արդյունքների, դեռևս կոռուպցիայի մակարդակը Հայաստանում մնում է բարձր և հիմնական փոփոխությունների չի ենթարկվում: Այսինքն ազդեցության գնահատականը մենք տալիս ենք, և ասում ենք, որ թե կոռուպցիայի ընկալման գործակիցը, թե հսկողության ինդեքսը դինամիկայում էական կամ հիմնական փոփոխություններ չի ընդունում: Այսինքն այն հաջողությունները, այն արդյունքները, որ մենք ունենք այսօր, մենք խնդիր էինք դրել, ինչպես վարչապետն ասեց, որ կոնկրետ այդ ազդեցությունները մեծացնեինք, պետք է ելնենք նաև այն բազայից, որը ունենք 2003, 2007 թվականների ռազմավարության մեջ: Մենք ելնում ենք այն միջոցառումներից, որ նախատեսված է եղել այդ ռազմավարության մեջ, և դրանց կատարման գնահատականներն ու արդյունքներն ենք ներկայացրել: Երկրորդ հարցի վերաբերյալ, կարևորագույն

հարցադրում է, այո, ես դրա օրինակը բերեցի, երբ որ օրենքը, դրույթը սահմանում է, բայց ընթացակարգերը չկան: Այո, դրանք հենց ամբողջ փաթեթը որպես գործիք ներառված է ինչպես կանխարգելման, այնպես էլ բացահայտման և քաղաքացիական հասարակության մասնավոր կրթության մեջ: Մի օրինակ բերեմ, որը շատ տարածված է ամենօրյա մեր շփումներում, երբ մարդուն ուղարկում են տեղեկանքների հետևից: Այն բոլոր գործընթացները և այլն, որոնք որ պետական մարմնի գործառույթ են, քաղաքացուն չպետք է վազեցնեն տեղեկանքի հետևից, դա պետք է կատարի պետական չինովնիկը տարբեր գերատեսչությունների միջև: Իհարկե դրան հասնելու ձևերը, մեթոդները, էլեկտրոնային կառավարում, տվյալների միասնական բազա, հեշտացնելու և այլն, և այլն: Այսինքն շատ հարցերում ոչ միայն ինֆորմացիան է փակ, ինչպես նշեց իմ կոլլեգան, այլև մարդկանց որոշումներ կայացնելու այդ ամենացածր օղակում շատ հայեցողական: Ձեզ կարող է վազեցնեն, մի տասը հատ տեղեկանք բերեք, բայց ոչ միայն դուք կարգը չգիտեք, այլև չգիտեք, թե կարգը ինչպիսին է: Բերենք պրիմիտիվ մի օրինակ, որը շատ ընդունված է: Այսօր գիտենք, քայլեր կան մաքսային, հարկային բազաները բացելու և էլեկտրոնային կայքերում տեղադրելու: Մաքսայինում այսօր կան, ես չեմ ուզում գովել, բայց ինչ-որ մի փոփոխություն արդեն կա, դուք կարող եք տեսնել գները, դրույթաչափերը, մի ամիս առաջ չկար: Այսինքն մենք այդ հարցն էլ ենք ռազմավարության մեջ կարևորում, որ ոչ միայն ընթացակարգերը սահմանված լինեն, այլև որոշ տեղեր մենք մտածել էինք, բերել ենք ցուցանիշներ, թե օրինակ, ինչպես նշում է Շուշանը Դուրյան, որ հարկային ծառայություն քանի հոգի են դիմել, հայտարարագրեր ներկայացնելիս քանիսն է ըստ դինամիկայի պատժվել, գործընթացի պրոգրեսը ինչպես է եղել, այս արդյունքը ներկայացնում ենք:

Հարց հնչեց, թե ինչպես պետք է քաղաքացիական հասարակությունը իր ներդրումը ունենա, դա իսկապես հսկայական, ես կարող եմ մի ամբողջ ցանկ թվարկել, բայց մի քանի առանցքային մեխանիզմների մասին կուզենայի կիսել իմ մտքերը, քանի որ մենք հիմա գտնվում ենք ռազմավարության մշակման փուլում, նախատեսվում է իրականացնել հանրային բազմաթիվ քննարկումներ, և ես ուղղակի խնդրում եմ, որ բոլոր հասարակական կազմակերպությունները, որոնք ասելիք ունեն, անպայմանորեն ներկա գտնվեն այդ քննարկումներին, իրենց ասելիքը ասեն, իրենց առաջարկները, դիտարկումները անեն արդեն իսկ պատրաստված նախագծի վերաբերյալ և պատրաստվելիք դեռևս գլուխների վերաբերյալ: Այսինքն լինի իսկապես հանրային քննարկում այս փաստաթղթի շուրջ, և փաստաթուղթը, որ պետք է ստեղծվի, լինի բոլորիս միասնական արդյունքը, այս փուլի համար, բայց որպես մշտական մեխանիզմների մի քանի ձևեր եմ ուզում նշել, առաջին հերթին մեր խնդիրը պետք է համարենք հսկելը և ահազանգելը, և երբ կոռուպցիոն որևէ դրսևորում ենք տեսնում, ականատեսն ենք լինում, հանդիպում, անպայմանորեն պատասխանատվության կանչենք այն պաշտոնյային, որ դրա մեջ անմիջականորեն ներգրավված է, երկու օր առաջ դատարան դիմեցինք նոր գործով, Հրազդանի քաղաքապետի դեմ, որովհետև մենք տեղեկություն ունեինք, որ օրինակ համայնքի բյուջեի միջոցները տրամադրվել են ավագանու որոշումներով տրամադրվել են իրեն հարազատ մարդկանց, և փորձում ենք ստանալ ավագանու որոշումների պատճենները, դրանք

բնականաբար մեզ չէին տրամադրվել, և փորձում էինք, որպեսզի դատարանի միջոցով փորձենք պահանջել և բացահայտել թե ովքեր են եղել այդ մարդիկ, չափը, ինչ գումար են ստացել, այսինքն փորձում ենք հետևողական օրենքի առաջ կանչել պատասխանատվության այդ մարդկանց: Պետությանը գուցե երբևէ հայտնի չդառնար դա, եթե չլիներ հասարակական կազմակերպության կամ բուն քաղաքացիների այդ ուշադրությունը, հայտնաբերելու դեպքում նաև հետևողականությունը հայտնաբերված կոռուպցիոն ռիսկը կամ վտանգը բերել իրավական դաշտի առջև պատասխանատվության: Մյուս մեխանիզմը, որը կրկին շատ են կարևորում, դրանք ուսուցումներն են, որոնք կարող են իրականացնել հասարակական կազմակերպությունները իրենց մարդկային պոտենցիալի շնորհիվ, որովհետև իսկապես իսկայական փորձ ունեն կուտակած որոշ կազմակերպություններ, և ես ուղղակի քաջալերում եմ նրանց, որ չանտեսենք ուսուցման այս կարևորությունը, որովհետև իսկապես մարդիկ կան կառավարման համակարգում, որ ուզում են լավ աշխատել, ուզում են խուսափել, կան այդպիսիք, բայց որոնք չգիտեն ինչպես, ծանոթ չեն մեխանիզմներին, հատկապես խոսում են մարզային կառույցների մասին, որովհետև Երևանում իրազեկման մակարդակը եթե մի քիչ ավելի բարձր է, ապա մարզերում մենք լուրջ խնդիր ունենք, ինչպես նաև հանրային իրազեկում իրականացնելու միջոցով, ակտիվացնելով, այսինքն մեխանիզմները այնքան բազմաթիվ են, որոնք ես կցանկանայի և նաև առաջարկում եմ հանդիպումից հետո քննարկենք և համատեղ նաև միջոցառումներ իրականացնելու հարցը քննարկենք: Շնորհակալություն:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, հաջորդ հարցը:

Տիգրան Գեղամյան.

Այդ բոլորը լսելով եկանք այն եզրակացության, որ այդ կոռուպցիան ոչ թե պետք է ռազմավարություն կոչել, այլ չարիքի արմատախիլ անել, որովհետև եթե մեր հանրապետության նախագահն ու վարչապետը արել են այդ գործը, մենք պետք է բոլորս էլ համախմբված օգնենք, ինչ որ գիտի տվյալ դեպքում, տվյալ թեկուզ ղեկավարի անձին, և բացահայտվի և արմատախիլ լինի: Միաժամանակ մենք պետք է ոչ թե գնանք միջազգային մակարդակով, այլ մենք պետք է լինենք առաջամարտիկը: Այն դասախոսի կամ ուսուցչի պես առաջինը պետք է լինենք գործի նախաձեռնող և մենք պետք է կառավարենք այդ բոլոր ազգերին, ոչ միայն Հայաստանում կոռուպցիան վերանա, այլև երկրագնդի բոլոր պետություններում, հանձինս մեր Հայաստանի կառավարությունը իշխողը լինի:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, սա երևի ավելի շատ հայտարարություն էր, և ոչ թե հարց, տիկին Սարիբեկյան, խնդրեմ:

Շնորհակալություն, այստեղ նշվեց օրենքի իրականացման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմը, մենք շատ կարևորում ենք և դրա նախնական փուլը, օրենքի նախագծի պատրաստման և քննարկման գործընթացին

հասարակության ակտիվ ներգրավման և մասնակցության հարցը: Դա մի հարց է, ինչպե՞ս եք դուք նայում, ով պետք է ընդգրկվի, մենք կարող ենք քննարկել օրենքի միայն վերջնական նախագիծը: Բայց երբ սկսում ենք օրենքի նախագծի վրա աշխատել, դա պետք է լինի պրոֆեսիոնալների խումբ, մասնավորապես Շուշանը շատ լավ իրազեկված է և այստեղ դահլիճում կան մարդիկ,կոնվենցիայի յոթերորդ հոդվածը հենց դրա մասին է խոսում, որ լիազորված մարմինը որոշում է հասարակության այն շրջանակները, որի հետ նա պետք է աշխատի: Ձեր կարծիքով դա ովքե՞ր պետք է լինեն և ինչ մեխանիզմ պետք է լինի, որպեսզի լիազորված մարմինը ընտրի այդ կողմը, դա առաջին հարցն է, և երկրորդ հարցը, այստեղ հնչեց, որ ՀԿ-ները պետք է հետևեն, և այլն, և այլն, չեք կարծում, որ, գործ տվող տերմինը օգտագործվեց չգիտեմ ում կողմից, հնարավոր չէ, որ, նույնիսկ եթե մենք հումորով ենք դա ասում, բայց իրոք հետապնդվեր, օրինակ ես եկել եմ մեկ շաբաթ առաջ կոնֆերանսից, Թուրքմենստանի փորձն էր ներկայացված, որտեղ ՀԿ-ները հետապնդվում են, եթե նրանք ակտիվ հարց էին բարձրացնում: Շուշանը նշեց այդ գործը, որը դուք հարուցել եք Հրազդանի քաղաքապետի առջև, չի նախատեսվում արդյոք, դա գուցե պարոն Խուդավերդյանին է ուղղված հարցը, որ բոլոր թույլտվությունների, որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվի, ասենք կայքերում տեղադրվի, թերթերում տպագրվի, այսինքն տրանսպարենտությունը հենց այստեղից երևա, որ այդ տեղեկատվությունը տարածվում է լիազորված մարմինների կողմից հասարակությանը և հասարակությունը կարող է դիրքորոշումը դրսևորել: Շնորհակալություն:

Շուշան

Անշուշտ համաձայն եմ, որ աշխատանքը պետք է արվի նեղ փորձագետների շրջանակում և կարծում եմ, որ հասարակական կազմակերպությունները պետք է պատվիրակեն իրենց իրավաբաններին, փորձագետներին, ում վստահում են և որը իրավասու է, լիազորված արտահայտելու տվյալ կազմակերպության տեսակետը, հանրային քննարկումները կազմակերպման մասին, ես նշեցի, որ դրանք պետք է լինեն պարբերաբար, ռազմավարության յուրաքանչյուր գլխի շուրջ պետք է լինեն այդ քննարկումները և այդ քննարկումների ժամանակ ես ակնկալում եմ լայն մասնակցություն, ոչ միայն փորձագիտական մակարդակով, այլև կազմակերպությունների լիդերների անդամների մակարդակով, որպեսզի դա իսկապես լինի քննարկում առաջացած հարցերի շուրջ: Ինչ վերաբերում է ՀԿ-ների հետապնդումներին, իսկապես դա վտանգ է, ռիսկ է, որը կանգնած է բոլորիս առջև, երբեմն ինձ էլ են հարցնում, որ այդքան հետապնդում եք, դատարան եք բերում պաշտոնյաներին, ի վերջո տեղի չեն ունենում հետապնդման փորձեր: Անշուշտ, ընդ որում հետապնդման մեխանիզմները տարբեր են, դրանք կարող են պարզապես լինել հարկային տեսուչներին, այդ կազմակերպություն ուղարկել հարկային ստուգումներ իրականացնելու, այսինքն մեխանիզմները բոլորս շատ լավ գիտենք: Ինչ խոսք, դա առկա է, և եթե հնարավոր է դրանից խուսափելու մեխանիզմներ նաև քննարկել, դա նույնպես շատ հրատապ հարց է: Որոշումների հրապարակման մասին, դա օրենքով հրատարակված պարտավորություն է, բայց դա չի կատարվում, այսինքն հատկապես մարզերում, ավագանու որոշումներ, համայնքի ղեկավարների որոշումներ, համատարած դրանք չեն հրատարակվում, և մարդիկ գերծ են հնարավորությունից ծանոթանալու դրան: Դրան են

ուղղված բազմաթիվ քայլեր, որ անում ենք, օրինակ, հենց այս պահին մենք հանրապետության երեսուներորդ համայնքներում արդեն ՄԱԿ-ի զարգացման ծրագրում ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ տեղադրում ենք տախտակներ տեղեկատվական և պարտադրում համայնքի ղեկավարներին փակցնել իրենց որոշումները, որովհետև երբ ասում ենք ինչու չեք հրատարակում, ասում են փող չունենք, ՋԼՄ-ները հրաժարվում են տպագրելուց, թանկ է և այլն: Մենք էլ ասում ենք, ահա ձեզ անվճար ռեսուրս, որը տեղադրված է մարդաշատ վայրում, փակցրեք ձեր որոշումները դրանց վրա: Սա մի փոքր մեխանիզմ է, որի միջոցով հասարակական կազմակերպությունները, քաղաքացիական հասարակությունը կարող է քաջալերել կառավարման մարմիններին, որպեսզի նրանք կարողանան բավարարել օրենքի պահանջը: Շնորհակալություն:

Արմեն Խուդավերդյան.

Ես կուզենայի մի բան ավելացնել լիցենզիաների հետ կապված, ռազմավարության մեջ ոչ միայն խնդիր ենք դրել դրանց թափանցիկությունը և հրապարակայնության հարցը, այլև վերլուծության մեջ մենք ունենք դրույթ, որ լիցենզիաների ծավալը և այդ թույլտվությունների ծավալը բավականին մեծ է թե տեսակներով և թե պրոցեդուրաների ընդունման գործընթացներով, հետևաբար լուծումների մեջ մեր մտքում կա, դա դեռևս իմ անձնական կարծիքն է, որ մենք փորձելու ենք առաջարկություններ ներկայացնել, որ լիցենզիաները պակասեցվեն, ինչպես նաև դրանք փոխարինվեն ապահովագրական կամ այլ մեխանիզմներով, որոնք շփումները չինովնիկների հետ նվազագույնի հասցնեն, շուկայական մեխանիզմների բերենք դրանց լուծումների մեծ մասը:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, ցավոք սրտի մենք ունենք միայն մեկ հարցի հնարավորություն, որովհետև ժամանակը սպառվում է:

Կարինե Սարիբեկյան.

Ես թերևս կուզենայի ոչ թե հարց տալ, այլ քննարկման մասով թերևս կամ փորձի փոխանակում կամ հայտարարություն անել ՀԿ-ների համար, եթե մեկ հարցի հնարավորություն կա, կամ մեկ ուրիշը կոնկրետ հարց է ուզում տալ, ես կարող եմ զիջել: Ես Կարինե Սարիբեկյանն եմ, Առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման բաժնի պետը, ղեկավարում եմ այս ծառայությունը քսան տարի և միաժամանակ ինքս ներգրավված եմ եղել հակակոռուպցիոն մասնակցային մոնիտորինգի ծրագրում որպես նախարարության ներկայացուցիչ: Երևի ծննդօգնությունը այն ոլորտն է, որտեղ այս խնդիրը ավելի շատ է շոշափվում առողջապահության մասով, և ասեմ, որ իմ փորձը փորձագետների հետ նաև օգնեց, և կար հստակ և կոնկրետ հանձնարարական, վարչապետի հանձնարարականը, վերացնել ապօրինի գանձումները, այսինքն կոռուպցիայի դեմ պայքարել և արդյունավետ միջոցներ ձեռնարկել: Այսօր հուլիսի երկուսն է, անցել է ինն ամիս հանձնարարականից և մենք ներդրել ենք մի նոր համակարգ, կարծում եմ շատե՛ն են լսել ծննդօգնության հավաստագրերի համակարգը, չեմ պատրաստվում մանրամասնել, բայց ուզում եմ ասել, որ աշխատել ենք որ միայն մասնագետների, աշխատել ենք ՀԿ-ների հետ,

նախարարին կից կա խորհուրդ, ՀԿ-ների խորհուրդ, մասնագիտական ՀԿ-ներ, որոնք աշխատում են մայրության ոլորտում և ամբողջ փաստաթղթերի մշակման փաթեթը, քննարկվել է իրենց հետ: Մենք մշակել ենք մոնիտորինգի վերաբերյալ հրաման և այդ հրամանը ենթադրում է, որ տեղերում կազմակերպությունները կարող են ներգրավվել մոնիտորինգի գործընթացում, մարզերում, երեկ փոխվարչապետի մոտ խորհրդակցություն էր, մարզերը նույնպես մասնակցում էին, մենք շատ հակիրճ ներկայացրեցինք բովանդակությունը, խոսվեց նաև մոնիտորինգի փաթեթի մասին, առաջարկվեց համագործակցել ՀԿ-ների հետ, ինչի վերաբերյալ ես ուզում էի, որ այստեղ հայտարարությունը հնչեր: Մի խնդրանք, որը վերաբերում է մոնիտորինգի ձևին, ինչպես ներկայացվեց, որ այդ աջակցությունը այս ծրագրում մենք ակնկալում ենք աջակցող մոնիտորինգ, ոչ թե ստուգողի կարգավիճակում լինեն, այլ ունենք փորձ, ես ինքս եղել եմ նախորդ ծրագրում մասնակցային մոնիտորինգի խմբերի հետ, և Քրիստինեն շատ լավ հիշում է, ինքը նույնպես մասնակցում էր, երբ հասարակական կազմակերպությունը իր պարտականությունը, իր դերը տեսնում էր քրեական տարրեր փնտրելու մեջ, ես ուղղակի խնդրում եմ, և իհարկե հասկանում եմ, որ իհարկե նրանք ունեն այս բացերը բացահայտելու իրավունք, բայց այս շրջանակներում մոնիտորինգը անել աջակցելու համար համակարգին և քաղաքացիներին, այսինքն մեր խմբերը հիմա ավելի շատ տեղում բացատրական աշխատանք են տանում, իրավունքներն են բացատրում, բուժաշխատողներն էլ ունեն խնդիրներ, իրենց հետ են աշխատում, և ավելի շատ այս էտապում մենք փորձում ենք օգնել, իրազեկել, և տեղում խնդիրները լուծել, և մենք հետադարձ կապ ունենք, իմ խնդրանքն է, եթե որևիցե մի կազմակերպություն հատկապես մարզային մակարդակում, որտեղ ՀԿ-ները շատ ավելի ակտիվ են և կոնտակտները շատ ավելի պարզ են, դիմեք ձեր մարզային առողջապահության վարչություններին, բայց մինչ այդ մտեք առողջապահության նախարարության ինտերնետային կայքը (www.moh.am), որտեղ ծննդօգնության լինկում կտեսնեք նորություններ, և բոլոր փաթեթը, ամբողջ փաթեթը, այսօր ես կտեղադրեմ նաև մոնիտորինգի հրամանը իր հավելվածներով, և եթե կլինեն հասարակական կազմակերպություններ, որորնք կուզեն աջակցել, մենք բաց ենք երկխոսության համար և տեղերում նաև մարզպետարանի հետ աշխատել:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, այժմ վերջին հարցը, բայց խնդրում եմ հակիրճ, և հարցը, և պատասխանը:

Շնորհակալություն, մի փոքրիկ նախադասություն, և կփորձեմ հարցս ձևակերպել, երբ որ Շուշանը ասում էր, թե տեղական ինքնակառավարման մարմինների կողքին կանգնենք, լեննականցու բառերով ասած վրես դող եկավ, կգնանք ուղղակի կաշառակեր դառնալու, սարսափելի բան է, և եթե դուք ասում եք, որ տեղական ինքնակառավարման մարմիններում նաև ազնիվ մարդիկ են աշխատում, դա բացառված է ուղղակի, որովհետև այնտեղ գնում են փող աշխատելու, դա այդպես: Վերջին նիստից հետո, երբ որ առաջին անգամ մենք այստեղ հավաքվեցինք, և դրանից ընկած այս ժամանակահատվածում

երկրորդ անգամ, որ այսօր եկանք, փաստորեն ես Գաիին 5000 դրամ ավել վճարեցի, այնպես որ դա էլ այդպես: Հարցս կուզեմ ձևակերպել, ինչքանով մարզերը ընդգրկված են այս ծրագրի մեջ: Ես արդեն բավականին երկար աշխատում եմ գրասենյակի հետ և բավականին իրազեկված եմ, թե ինչ է կատարվում, բայց մարզերը համենայն դեպս ռազմավարության մշակման մեջ ես անկեղծ ասած, գուցե իմ ինֆորմացիան բավականին թույլ է, բայց չեմ նկատել նրանց ակտիվ մասնակցությունը և ձեզնից դեպի մարզեր, և մարզերից դեպի այստեղ: Դա շատ կարևոր է, որովհետև ինչ որ մարզերում է, մի քիչ ավելի թանկ է, որովհետև ասում են Երևանի բաժինն էլ պետք է տաք, սովորաբար, կաշառքի տեսակետից:

Արմեն Խուդավերդյան.

Եթե ի նկատի ունեք մարզերի ընդգրկվածությունը տարածքային, այն տեսանկյունով, որպես կոռուպցիայի ռիսկեր մարզային մակարդակում, դրան մենք կանդրադառնանք չորրորդ գլխում, ինչ վերաբերում է ծրագրի մշակման գործընթացում մարզային ծառայությունների կամ տարածքային կազմակերպությունների ներգրավվածությանը, դրան Շուշանը կանդրադառնա:

Շուշան Դոյդոյան.

Բայց Ձեր առաջին դիտարկումը շատ համոզ էր, ասեմ, ասեցիք Շուշանն ասեց կանգնենք տեղական ինքնակառավարման մարմինների կողքին, ես ասեցի եկեք լինենք գործընկեր, բայց փայտը ձեռքներիցս չզցենք: Եթե Դուք ամբողջ կոնտեքստում, որովհետև ես ասեցի եկեք կողքներին կանգնենք, լինենք գործընկեր, բայց նաև երբ որ պետք է դատի տանք, պետք է՝ ուսուցանենք և պետք է՝ հսկենք: Այս բոլորը որպես միասնություն պետք է դիտարկենք, և ի՞նչ է նախատեսվում: Ես ասեմ, որ հանրային քննարկումները, երբ որ ես խոսում էի դրա մասին, դրանք միայն Երևանում չեն նախատեսվում իրականացվել, և հատկապես ընտրված է Լոռու մարզը, Տավուշի մարզը և Շիրակի մարզը, այդտեղ նույնպես փորձագիտական խումբը գնալու է, իրականացնելու է այդ քննարկումները, ընդ որում հանրային քննարկումներ ոչ միայն սենյակներում, այլև հեռուստատեսությամբ, մարզային հեռուստաընկերություններում, այնպես որ կարծում եմ դա լավ միջոց է Ձեր տեսակետը հենց տեղում արտահայտելու համար:

Քրիստինե Բարսեղյան.

Շնորհակալություն, ցավոք սրտի մեր ժամանակը բավականին սահմանափակ է, ես ուղղակի մի բան ուզեմ, որ այս ֆորումը առաջինն է ֆորումների այն շարքից, որը մեր կազմակերպությունը, մեր ծրագիրը կկազմակերպի, և մենք մտածում ենք, որ հաջորդ ֆորումները տեղի կունենան ոչ թե Երևանում, մենք շատ կուզենայինք, որ նրանք տեղի ունենային այլ քաղաքներում հանրապետության և նրանք ևս ընդգրկվեն: Այժմ հարգելի մասնակիցներ, ամփոփենք այսօրվա քննարկումը և փակման խոսքով հանդես կգա Հայաստանում ԱՄՆ ՄՁԳ առաքելության տնօրեն պարոն Ռոբին Ֆիլլիպսը, խնդրեմ:

Robin Phillips:

Good afternoon. I am Robin Phillips from USAID. I, however, am not going to summarize the discussion but I would like to make a couple of comments on it if I may. First of all I would like to thank everyone who was here from the government, from civil society, from the private sector, from media, and from the international community, and from the national assembly – but the national assembly is part of government in our view. Thank you.

Today's discussion has highlighted the importance of developing an Anti-Corruption Strategy that has public support and the US government is please to see that the Anti-Corruption Strategy Monitoring Commission is taking additional measures to ensure effective public participation. Now, I realize there there have been some questions about how that can be effective, but that discussion has to happen and convince the Monitoring Commission to do the best. For example, continued civil involvement in drafting the Strategy will be critical to building public confidence – that was mentioned a little earlier – and will demonstrate the government's commitment to fully involving the Armenian public as a partner in the fight against corruption.

I'd like to recognize a point made by the prime minister this morning. I wasn't in attendance but I heard about it, and he reminded us that Armenia is taking renewed steps to reduce corruption, not simply because of international obligations, which have been discussed today, but because Armenia needs to take these steps and needs to have fundamental, I think what he calls, "fundamental attitude change." In fact, it's interesting, because this morning, the reason I wasn't here was because I was in a meeting at the Ministry of Economy, with the Minister, with the commission that I council, I think, that the Prime Minister has formed, and when we were discussing with people from the tax service, from customs, from the Finance Ministry, from the Ministry of Economy, there were several of us from the donor communities side and we were discussing how we could help in this renewed drive.

And finally I'm sure we would also agree that it is important to take some of the ideas discussed today and think of ways to come up with some early, some tangible, and some credible results in the fight against corruption. I think that's quite important. Thank you very much for letting me come.

